

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՍՊԱՌՎՈՂ ՅՈՂԻ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՔԱՆԱԿՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ  
ԵՂԱՆԱԿՈՎ ՊԱՏՐԱՍՏՎԱԾ ՄՆԵՂԱՍԹԵՐՔԻ  
ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՂԻ  
ՓԱՍՏԱՑԻ ԿԱՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՆԵՐԴՐՄԱՆ  
ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Եզրափակիչ ազգային զեկույց: [Հայաստանի Հանրապետություն](#)

Հ ա յ ա ս տ ա ն

2020 թվական

ՀՏԴ 614(042.3)

ԳՄԴ 51.1

Բ 761

ԱԱԽ կազմը՝

- Հրայր Ասլանյան, ՅԳՑ հետ աշխատանքի ազգային համակարգող, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի Հիգիենայի դասընթացների և պարենային ապրանքների և ոչ պարենային ապրանքների անվտանգության լաբորատորիայի դասախոս,
  - Դիանա Անդրեասյան, ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ-ի փոխտնօրեն, ԱԱԽ-ի առողջապահության տեղեկատվական վերլուծական կենտրոնի ղեկավար,
- Աշխեն Շիրվանյան, ՀՀ էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչության պետ,
  - Վահե Դանիելյան, ՀՀ կառավարությանը ենթակա Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍՍՏՄ) Սննդամթերքի անվտանգության և որակի հսկողության վարչության պետ,
  - Հասմիկ Մարտիրոսյան, «Ավանի աղի կոմբինատ» ՓԲԸ-ի Աղի արտադրության տեխնոլոգիայի բաժնի ինժեներ:

Աշխատանքի ընդհանուր համակարգումն ապահովել է ՅԳՑ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային կոորդինատոր պրոֆ. Գրեգորի Գերասիմով

Բնակչության կողմից սպառվող յոդի ընդհանուր քանակում արդյունաբերական եղանակով Բ 761 պատրաստված սննդամթերքի արտադրության մեջ օգտագործվող աղի փաստացի կամ հնարավոր ներդրման գնահատումը (Եզրափակիչ ազգային զեկույց, Հայաստանի Հանրապետություն), 2020.- Եր.: ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, 2021.- 35 էջ:

Եզրափակիչ ազգային զեկույցը ներկայացնում է բնակչության կողմից սպառվող յոդի ընդհանուր քանակում արդյունաբերական եղանակով պատրաստված սննդամթերքի (ԱՊՍ) արտադրության մեջ օգտագործվող աղի ներդրման գնահատման գործընթացն ու արդյունքները: Գնահատումն իրականացվել է 2019 թվականի ընթացքում, ազգային աշխատանքային խմբի (ԱԱԽ) կողմից, ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի (ԱԱԻ) գլխավորությամբ և Յոդի Գլոբալ Ցանցի (ՅԳՑ) տեխնիկական ու ֆինանսական աջակցությամբ: Ձեկույցը նախատեսված է առողջապահության կազմակերպիչների, հանրային առողջապահության փորձագետների, առողջապահական ծառայություններ տրամադրողների, ինչպես նաև բնակչության առողջության պահպանման հարցերով զբաղվող այլ մասնագետների համար:

ՀՏԴ 614(042.3)

ԳՄԴ 51.1

ISBN 978-9939-879-73-4

© ՀՀ ԱՆ «Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, 2021

## Եզրափակիչ ազգային զեկույց: **Հայաստանի Հանրապետություն**

**Բնակչության կողմից սպառվող յոդի ընդհանուր քանակում արդյունաբերական եղանակով պատրաստված սննդամթերքի արտադրության մեջ օգտագործվող աղի փաստացի կամ հնարավոր ներդրման գնահատումը**

Ապրիլ, 2020 թվական

Սույն փաստաթուղթը ներկայացնում է բնակչության կողմից սպառվող յոդի ընդհանուր քանակում արդյունաբերական եղանակով պատրաստված սննդամթերքի (ԱՊՍ) արտադրության մեջ օգտագործվող աղի ներդրման գնահատման գործընթացն ու արդյունքները: Նախագիծն իրականացրել է ազգային աշխատանքային խումբը, 2019 թվականին, ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահության ազգային ինստիտուտի (ԱԱԻ) գլխավորությամբ և Յոդի Գլոբալ Ցանցի (ՅԳՑ) տեխնիկական ու ֆինանսական աջակցությամբ: Գնահատման եզրափակիչ զեկույցը նախատեսված է, նախ և առաջ, ազգային մակարդակում օգտագործելու համար: Զեկույցի քննարկմանը նվիրված ազգային սեմինարը կայացել է 2020 թվականի ապրիլին, Հայաստանի մայրաքաղաք Երևանում: Քննարկման եզրակացությունների և առաջարկությունների հիման վրա զեկույցում կատարվել են համատասխան լրացումներ և հղումներ:

### **1. Պատրաստի սննդամթերքի (ԱՊՍ) արտադրության մեջ յոդացված աղի օգտագործման գնահատման հիմնավորումը**

ԱՀԿ STEPS մեթոդաբանության օգնությամբ Հայաստանում ՌՎՀ ռիսկի գործոնների վերաբերյալ վերջերս անցկացված հետազոտությունը ցույց է տվել, որ երկրի չափահաս բնակչությունը (18-69 տարեկան) օրական սպառում է մոտ 10 գ աղ, իսկ այն մարդկանց տոկոսը, ովքեր միշտ կամ հաճախ ուտում են աղի բարձր պարունակությամբ աչքի ընկնող ԱՊՍ, գերազանցում է 31%-ը /1/: Ավելին, ԱՀԿ, Յունիսեֆի, ՅԳՑ նյութերի և այլ կարևոր փաստաթղթերի մանրակրկիտ վերլուծությունը պարզել է, որ աճում է միջազգային ճանաչումն առ այն, որ մարդկանց կողմից սպառվող աղի ընդհանուր քանակի մեծ մասը գալիս է ԱՊՍ-ից (70-80%) և, հետևաբար, յոդացված աղով (ըստ բաղադրատոմսի) արտադրված պատրաստի սննդամթերքը դառնում է սպառողների համար յոդի հիմնական աղբյուր /2/.

Հաշվի առնելով վերը նշված ապացույցները, համապատասխան մասնագետների շրջանում ձևավորվել է ընդհանուր կարծիք, որ Հայաստանում սննդամթերքի վերամշակման համար օգտագործվող աղը կարող է ներկայացնել ողջ կերակրի աղի էական մասը և, յոդացված լինելու պարագայում, այն կարող է ապահովել օրգանիզմ մուտք գործող յոդի զգալի մասնաբաժինը: Հետևաբար, անհրաժեշտ է ջանքեր գործադրել, որպեսզի ԱՊՍ արտադրության մեջ օգտագործվող ողջ կերակրի աղը լինի պատշաճորեն յոդացված (ըստ կանոնակարգի), նպատակ ունենալով նվաճել և պահպանել յոդի օպտիմալ կարգավիճակ բնակչության բոլոր խմբերում (ՅԳՑ ծրագրային ուղեցույցն առաջարկում է, որպեսզի ԱՀՅ-ն ապահովի անհրաժեշտ քանակի յոդի սպառում բնակչության բոլոր խմբերում, անկախ կերակրի աղի նկատմամբ եղած դիետիկ սովորություններից, նկատի ունենալով դրա ստացումը տնային տնտեսության խոհանոցային աղից կամ վերամշակված սննդամթերքից, այդ թվում, համեմունքներից):

Հայաստանում աղի համընդհանուր յոդացման (ԱՀՅ) ռազմավարությունն ընդունվեց ՀՀ կառավարության թիվ 353-Ն որոշմամբ (2004 թ.): Չյոդացված աղի արտադրությունը և ներկրումը, ինչպես նաև պատրաստի սննդամթերքների արդադրության մեջ չյոդացված աղի կիրառումն արգելվեց՝ **“բացառությամբ այն դեպքերի, երբ յոդացված կերակրի աղի օգտագործումը չի թույլատրվում արտադրության տեխնոլոգիայով”** (վերջինս կարող է սողանքը հանդիսանալ չյոդացված աղի վաճառքը խանութներում և կիրառումը ԱՊՍ արտադրության մեջ թույլատրելու համար): Մեկ տարի անց, երկրում անցկացված “Յոդային սնուցման հետազոտությունը” ցույց տվեց /3/, որ տնային տնտեսություններից վերցրած կերակրի աղի նմուշների 97.2%-ը պարունակում է ավելի քան 15 մգ յոդ՝ մեկ կգ աղին և 8-10 տարեկան երեխաների մեզում յոդի պարունակության մեղիանան (ՄՅ մակարդակը) փոքր ինչ գերազանցում է ԱՀԿ-ի սահմանած օպտիմալ դիապազոնի վերին սահմանը: Հետագայում, աղի մեջ յոդի պարունակությունը կրճատվեց մինչև  $40 \pm 15$  մգ/կգ: Մննդի արդյունաբերությունն ակնհայտորեն ունի զգալի ներդրում յոդի սպառման մեջ՝ պատրաստի սննդամթերքում յոդացված աղ օգտագործելու շնորհիվ (սակայն, համապատասխան հրապարակումներ չկան): “Յոդի անբավարարության կայուն էլիմինացիայի ցանցի” կողմից Հայաստանը 2006 թվականին միջազգայնորեն ճանաչվեց որպես յոդի անբավարարությունը հաջողությամբ հաղթահարած երկիր (շնորհվեց վկայական) /4/: Յոդային սնուցման հաջորդ (2016-17թ.թ) ազգային հետազոտության արդյունքները հաստատեցին, որ երկրի բնակչությունն ունի ադեկվատ յոդային սնուցում և պաշտպանված է յոդային անբավարարությունից; պարզվեց նաև, որ բնակչության կողմից սպառվող յոդի ընդհանուր քանակում պատրաստի սննդամթերքին վերագրվող յոդի բաղադրիչն ավելի մեծ է, քան յոդի այն բաղադրիչը, որը կարող է վերագրվել տնային տնտեսության աղին /5/ (զարմանալի է, որ այս դեպքում, ՅԱԽ տեսակետից էնդեմիկ Հայաստանում «բնական յոդի» մասնաբաժինը շատ ավելին է, քան ԱՊՍ արտադրության մեջ կիրառվող և տնային տնտեսության մեջ օգտագործվող աղերից ստացված յոդի բաժինները միասին վերցրած):

2000-2009 թվականներին, Հայաստանում ՅԱԽ Էլիմինացիայի ծրագիրը, ըստ էության, դիտարկվում էր որպես առողջապահության ոլորտի միջամտություն: Վերջինիս նշանակալից հաջողությունը պայմանավորված էր ծրագրի վերահսկողության համար պատասխանատու Բազմամասնագիտական աշխատանքային խմբի (ԲԱԽ) ջանասեր աշխատանքով: Ի հավելումն, Ավանի աղի կոմբինատը (ԱԱԿ)՝ երկրում միակ աղարտադրող ձեռնարկությունը, որպես ԱՀՅ ռազմավարության հզոր ջատագով, շարունակում էր մատակարարել պատշաճորեն յոդացված կերակրի աղ, նպաստելով բնակչության օպտիմալ յոդային սնուցմանը: 2009 թվականից հետո, «Մանդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի (2006 թ.) դրույթների հիման վրա, սննդամթերքի մոնիթորինգի լիազորությունները վերապահվեցին ՀՀ կառավարությանը ենթակա Մանդամթերքի անվտանգության տեսչական մարմնին (ՄԱՍՄ), որի աուդիտորական պլանները, մինչև 2017 թվականը, սննդի արտադրության համար կիրառվող աղի մեջ յոդի պարունակության մոնիթորինգ չեն նախատեսել: ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ը շարունակեց իրականացնել աղում յոդի պարունակության մշտադիտարկում՝ միայն տնային տնտեսությունների մակարդակում; Հայաստանում ԱՀՅ ծրագիրը կորցրեց մի կարևոր բաղադրիչ՝ աղի մեջ յոդի մակարդակի մշտադիտարկումը մանրածախ առևտրի և սննդի արտադրության մակարդակներում: ԲԱԽ-ն այլևս չէր գործում (ՀՀ առողջապահության նախարարության փոխգործակցությունը ՄԱՍՄ-ի հետ թույլ էր):

ԱՀՅ ծրագրի հենասյուներից մեկը՝ պատրաստի սննդամթերքում յոդացված աղի օգտագործման վերահսկողության և կիրառված բաղադրիչը վերականգնվեց առողջապահության և գյուղատնտեսության (ներկայումս՝ Էկոնոմիկայի) նախարարությունների Համատեղ հրամանով (829-Ա և 74-Ա, 2016 թ. մարտ): 2018-2019 թթ. ընթացքում, Մանդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (ՄԱՍՄ), հանդիսանալով ոլորտի պետական լիազոր մարմինը՝ հայտնաբերել է սննդի արդյունաբերության մի քանի բնագավառներ, որոնք, վկայակոչելով վերոհիշյալ **«բացառությունը»**, մշակել են իրենց սեփական ուղեցույցները («տեխնիկական պայմանները»), նպատակ ունենալով կիրառել չյոդացված աղ (կոմբինատի կողմից մատակարարվող այսպես կոչված «աղ արտադրական կարիքների համար»): Այնուամենայնիվ, այդ գործելակերպը կարող է դեռ որոշակի նշանակություն ձեռք բերել, եթե չյոդացված աղի մասնաբաժինը ժամանակի ընթացքում ավելանա կամ ազգային մակարդակում աղի սպառումը կրճատելու միջոցներ ձեռնարկվեն: Հայաստանում այդպիսի ծրագիր դեռևս չկա, թեև վերջերս ԱՆ-ն դիմել է Ստանդարտների ազգային ինստիտուտին՝ առավել լայն սպառման հացատեսակների համար սահմանել աղի պարունակություն կամավոր միջակայք:

Այս գնահատումն իրականացնելու կարևորությունը պայմանավորված էր հետևյալ մի քանի հիմնական պատճառներով.

- Առողջապահության համակարգին տրամադրել գործիք՝ գնահատելու մեծ պահանջարկ ունեցող ԱՊՍ ներդրումը յոդի սպառման մեջ, նպատակ ունենալով

կատարելագործել աղի յոդացման ռազմավարությունը (ունենալ «իրական ԱՀՅ») և կայունացնել բնակչության յոդի ադեկվատ սնուցումը:

- Ամրապնդել համագործակցությունն աղի և սննդի արդյունաբերության և այլ շահագրգիռ կողմերի հետ, նպատակ ունենալով բարձրացնել իրազեկվածությունը ԱՀՅ վերաբերյալ և լուծել ընթացիկ ծրագրային խնդիրները (այդ թվում, բարելավել բաղադրատոմսում յոդացված աղով պատրաստված ԱՊՍ մոնիտորինգը):
- Գնահատել յոդի սպառման վրա աղի սպառման կրճատման քաղաքականության հնարավոր ազդեցությունը (եթե ՀՀ ԱՆ-ն, սիրտ-անոթային հիվանդությունների կանխարգելման նպատակով, մշակի և իրականացնի բնակչության կողմից աղի սպառումը կրճատելու ռազմավարություն):

## 2. Իրավիճակի վերլուծություն՝ ԱՀՅ ռազմավարության ամրապնդման անհրաժեշտությունը պարզելու համար

- i. ԱՐՄՍՍՍ-ի Տարեգրքում /6/ և ՏՏ/ԿԱՀ 2018 թ. Ջեկույցում /7/ ներկայացված տվյալները ցույց են, որ երկրում արտադրվում և մեծ քանակությամբ սպառվում է վերամշակված սննդամթերքի լայն տեսականի, ներառյալ աղ պարունակող այնպիսի հիմնական պարենային ապրանքներ, ինչպիսիք են հացը, պանիրը, վերամշակված մսամթերքը, թթու դրած բանջարեղեն և այլն: Այս ցուցանիշների համադրումը թվարկված ԱՊՍ-երում աղի մակարդակի վերաբերյալ սերտիֆիկացված լաբորատորիաներից ստացված տվյալների հետ (Հետադարձ կապի ձևին կից հավելված 4) վկայում է, որ Հայաստանում բնակչությունը մեծ քանակով սպառում է բավականին աղի հիմնական սննդամթերքներ և կիսաֆաբրիկատներ (որոնց մեջ աղի խտությունը ավելի բարձր է, քան աղի մակարդակները տարածաշրջանի մյուս երկրների նմանատիպ պատրաստի սննդամթերքներում):
- ii. Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի 2000 /8/, 2005 /9/ և 2015/16 /10/ թվականների հետազոտությունները ներկայացնում են երկրում որակյալ յոդացված աղ (>15 մգ/կգ) օգտագործող տնային տնտեսությունների մասնաբաժինները, որոնք կազմել են համապատասխանաբար 83.6% (n=5976), 97,1% (n=6656) և 98,7% (n=7838): Նմանապես, Հայաստանում յոդի սպառման կոմպոնենտային վերլուծությանը նվիրված հետազոտությունը ցույց է տվել /5/, որ երկրում առկա է յոդացված աղով բնակչության գերազանց ծածկույթ՝ սեղանի աղի հետազոտված նմուշների 93.4%-ը համապատասխանում են ազգային ստանդարտին (յոդի միջին պարունակությունը՝ 35,5 մգ/կգ): Ի հավելումն, ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի կանոնավոր արտաքին մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս /11/, որ վերջին մի քանի տարիների ընթացքում երկրի գրեթե բոլոր

տնային տնտեսությունները (ավելի քան 97%-ը) օգտագործում են որակյալ յոդացված աղ (ճաշասեղանի շուրջ՝ ուտելիս և խոհանոցում՝ կերակուրներ պատրաստելիս):

- iii. Ինչպես նշված է Գլուխ 1-ում /12/, ԱՀՅ ռազմավարությունը Հայաստանում դարձավ պարտադիր համաձայն կառավարության No 353-Ն որոշման (2004թ.), որը նաև սահմանեց կերակրի աղում յոդի պարունակության ստանդարտ, համեմատաբար բարձր մակարդակի վրա՝  $50 \pm 10$  մգ/կգ: Յոդային սնուցման ազգային հետազոտությունը (2005 թ., հունիս) ցույց տվեց, որ 8-10 տարեկան երեխաների մեզում յոդի խտության մեդիանան (ՄՅԽ) կազմում է 313  $\mu\text{g/l}$ , գերազանցելով փոքր-ինչ ԱՀԿ-ի կողմից առաջարկվող օպտիմալ դիապազոնի վերին սահմանը: Հայաստանին առաջարկվեց նվազեցնել պարտադիր ստանդարտը մինչև  $40 \pm 15$  մգ յոդ / կգ աղում (ընդունվել է ՀՀ կառավարության 21.12.2006թ. N 1863-Ն որոշմամբ): Ընդհանուր առմամբ, այս ուսումնասիրությունը հաստատեց, որ կերակրի աղի համընդհանուր յոդացման արդյունավետ ծրագրի օգնությամբ Հայաստանին հաջողվել է վերացնել յոդի անբավարարությունը երկրի բնակչության շրջանում: Նշվեց նաև, որ սննդի արդյունաբերությունն ունի զգալի ներդրում յոդի սպառման մեջ՝ պատրաստի սննդամթերքում յոդացված աղ օգտագործելու շնորհիվ /4/: Յոդային սնուցման հաջորդ ազգային հետազոտությունն անցկացվեց 12 տարի անց (2016 թ.), ՀՀ առողջապահության նախարարության հովանու ներքո: Հետազոտական թիմը բաղկացած էր «Կոլումբիա» համալսարանի վիրաբուժության և ընդհանուր թերապիայի քոլեջի, Կալիֆոռնիայի համալսարանի բժշկական դպրոցի (ԱՄՆ) և Երևանի պետական բժշկական համալսարանի գիտաշխատողներից (աշխատանքն իրականացվեց ՅԳՑ աջակցությամբ): Մեզի նմուշներում յոդի խտության որոշումը կատարվեց Բոստոնի բժշկական կենտրոնի յոդի հետազոտության լաբորատորիայում: Պարզվեց, որ ՄՅԽ մեդիանան դպրոցահասակ երեխաների մոտ կազմում է 242  $\mu\text{g/L}$ , հղիների մոտ՝ 226  $\mu\text{g/L}$  և վերարտադրողական տարիքի կանանց մոտ՝ 311  $\mu\text{g/l}$ : Նշված մեծությունները հաստատում են, որ յոդի սպառումը Հայաստանում գտնվում է օպտիմալ մակարդակում: Հետազոտողները եզրակացրեցին՝ յոդի անբավարարության վերադարձ չկա, երկրի բնակչությունն ունի պատշաճ յոդային սնուցում և պաշտպանված է յոդային անբավարարությունից /13/:
- iv. Հայաստանում ոչ վարակիչ հիվանդությունների (ՈՎՀ) կանխարգելումն ու վերահսկումը հայտարարված են որպես առաջնահերթություն՝ մի շարք փաստաթղթերում առողջապահական համակարգի առջև խնդիր է դրվում մշակել և իրականացնել համապարփակ գործողություններ, ուղղված ՈՎՀ բեռի կրճատմանը: Սակայն, առայժմ չեն մշակվել բավականաչափ պրագմատիկ (իրագործելի) առաջարկություններ, որոնք հիմք կհանդիսանային կոնկրետ



գործողություններ իրականացնելու համար /14/. Ընդհանուր առմամբ, կառավարության որոշումներով ընդունվել են չորս ռազմավարական ծրագրեր (իրենց գործողությունների պլաններով և բյուջեով), որոնք ընդգրկում են *հիմնական միջամտությունների* իրականացման քայլեր՝ նվիրված ՌՎՀ կանխարգելմանը բնակչության մակարդակում /15/: Սակայն, այդ ծրագրերից ոչ մեկը չի պարունակում որևէ գործողություն, ուղղված կերակրի աղի սպառման սահմանափակմանը կամ սննդամթերքում աղի պարունակության նվազեցմանը: Հայաստանում բնակչության կողմից աղի օգտագործման առավելագույն թիրախներ չեն սահմանվել: Չկա էպիդեմիոլոգիայի համակարգ՝ աղի սպառման օրինաչափությունների և սննդակարգում աղի հիմնական աղբյուրների որոշման, մշտադիտարկման և գնահատման համար:

Ակնհայտ է, որ Հայաստանն ազգային մակարդակում հասել է յոդային սնուցման ադեկվատ կարգավիճակի: Բնակչության կողմից բավարար քանակով յոդի սպառումը կարող է բացատրվել յոդի ստացումով սեղանի աղից (ապահովում է որակյալ յոդացված աղով > 90% բնակչության մշտական ընդգրկում), ինչպես նաև արդյունաբերական եղանակով մշակված սննդամթերքներում պարունակվող աղից: Սակայն, երկրում կերակրի աղի և, մասնավորապես, յոդացված կերակրի աղի սպառման գործում պատրաստի սննդամթերքի ներդրման գնահատում (ըստ սննդակարգի) երբևէ չի իրականացվել: Այդպիսի գնահատումը հնարավորություն կտա պարզել թե ինչպիսի ազդեցություն կարող է ունենալ «բացառության» կարգով չյոդացված աղի կիրառումը կամ, ընդհանուր առմամբ, աղի օգտագործման կրճատման քաղաքականությունը ԱՀՅ կայուն իրականացման և ՅԱԽ վերացման վրա:

Ռազմավարության առումով՝ ազգային թիմը հաստատեց, որ աղի յոդացման գործող կանոնակարգը (այսինքն՝ ԱՀՅ ակտը) պարունակում է պարտադիր դրույթ սննդի արդյունաբերության մեջ միայն յոդացված աղ կիրառելու մասին; այնուամենայնիվ, անհրաժեշտ է հետամուտ լինել սույն դրույթի կիրարկմանը՝ խուսափելով կամայական «բացառություններից», հատկապես լայնորեն օգտագործվող սննդամթերքի համար:

Աղի մատակարարման համակարգը: Ավանի աղի կոմբինատը (ԱԱԿ) հանդիսանում է Հայաստանում միակ աղ արտադրող ձեռնարկությունը և այն հետևողականորեն մատակարարում է որակյալ յոդացված կերակրի աղ: Դեռևս 1998-1999 թվականներին, ԱԱԿ-ը տարեկան մատակարարում էր 12 000 տոննա լիովին յոդացված կերակրի աղ և այդ քանակությունը համարվում էր բավարար՝ ներքին սպառման կարիքները հոգալու համար /4/ : Վերջին տարիներին (2013-2018 թթ.), ԱԱԿ-ը տարեկան մատակարարում է շուրջ 15 000 տոննա որակյալ յոդացված կերակրի աղ, երկու տեսակի՝ վակուում գոլորշացմամբ ստացված «Էքստրա» մանր աղ և խոշոր աղացվածքի քարաղ, մոտավորապես 50 : 1 հարաբերությամբ: Զուգահեռաբար, կոմբինատն արտադրում է շուրջ 6000 տոննա «ընտրովի քարաղ» (> 5 կգ քաշով բեկորներ) հիմնականում



գյուղատնտեսական կենդանիների համար (կերային քարաղ); այս արտադրանքի շուրջ ¼-ը մանրացվում և փաթեթավորում է ԱԱԿ-ում կամ փոքրամասշտաբ արտադրողների կողմից (10 արտադրամասեր) և, որպես չոդացված կերակրի աղ, մատակարարվում է մթերային խանութներին ու պատրաստի սննդամթերք արտադրող ձեռնարկություններին («արտադրական նպատակների համար» պիտակով): Վերջին չորս տարիների ընթացքում, ՀՀ ներկրվող յոդացված կերակրի աղի ընդհանուր քանակը տատանվում է տարեկան 2-3 հազար տոննայի սահմաններում, կազմելով ներքին շուկայում վաճառվող ամբողջ յոդացված աղի մոտ 1/6 մասը (2018 թվականին ներկրված կերակրի աղի առավելագույն մասը եղել է Ուկրաինայից, Իրանից և Ռուսաստանի Դաշնությունից): Հայաստանում արտադրված և արտաքին աղբյուրներից Հայաստան ներկրված յոդացված և չոդացված կերակրի աղի հաշվարկային ընդհանուր ծավալը կազմում է տարեկան մոտավորապես 19 000 տոննա կամ 6,33 կգ, ըստ մարդաշնչի: Այս ընդհանուր քանակից, յոդացված կերակրի աղի քանակը կազմում է 17 500 տոննա (6 տարվա միջինը), կամ 5,8 կգ ըստ մարդաշնչի (ամբողջ կերակրի աղի 92%-ը): ԱԱԿ-ը երկրի աղի շուկայում գերիշխող դիրք է զբաղեցնում: Կոմբինատի արտադրած կերակրի աղի մեծ մասը յոդացված է; դրա քանակն ակնհայտորեն բավարար է երկրի մասշտաբով ողջ բնակչության շրջանում յոդացված կերակրի աղի կարիքները հոգալու համար; սակայն, ԱԱԿ-ի արտադրանքի մի փոքր բաժին (8%) կարող է հասնել տնային տնտեսություններին և պատրաստի սնունդ արտադրողներին որպես ոչ յոդացված աղ:

Սննդամթերքի արդյունաբերական վերամշակում: Հայաստանն իր հացամթերքի համարյա անմնացորդ (նետոտ) արտադրողն է և ունի բավականին զարգացած կաթնամթերքի (օրինակ, աղաջրային պանիրներ), մսի և մսամթերքի (երշիկեղեն և կիսաֆաբրիկատներ), մակարոնեղենի և թթու դրած ու պահածոյացված բանջարեղենի արդյունաբերություն: Սրանք աղ պարունակող այն հիմնական մթերքներն են, որոնց համար գոյություն ունի հստակ կախվածություն տեղական արտադրությունից (ավանդական պանիրների, «Դոկտորսկայա» երշիկեղենի, թթուների ավելի քան 90%-ը): Ներմուծումն ավելի շոշափելի է պինդ պանիրների և մակարոնեղենի խմբերում: Աղի քանակը երկրում արտադրվող պատրաստի սննդամթերքում կարգավորվում է ազգային մակարդակում՝ Ստանդարտների ազգային ինստիտուտի կողմից: Վերջինս սահմանում է որոշակի մթերքներում աղի մակարդակների կամավոր միջակայք, նպատակ ունենալով աջակցել արտադրողներին համապատասխան տեխնիկական պայմանների (ՏՈ) մշակման գործում: Առողջապահության ազգային ինստիտուտի փորձագետները նշում են, որ տեղական արտադրության պարենային ապրանքները բավականին շատ աղ են պարունակում. ուստի, աղի մակարդակը նվազեցնելու համար անհրաժեշտ է, որպեսզի պատրաստի սննդամթերքի արտադրության տեխնիկական պայմանները և բաղադրատոմսերը վերանայվեն: 2834 ձեռնարկությունների, ներառյալ սննդի արդյունաբերության > 50 ընկերությունների ամսական հաշվետվությունների հիման վրա, ԱՐՄՄՍՍՍ-ը հրապարակում է տարեկան վիճակագրական տեղեկագրեր

ավելի քան 30 տեսակի/խմբի մթերային ապրանքների թողարկման ծավալների վերաբերյալ (բնեղեն արտահայտությամբ):

Աղ պարունակող պարենային ապրանքների մի քանի խմբերի՝ հացի և մակարոնեղենի, մսամթերքի, պանրի, մայրնեզի, պահածոների, ինչպես նաև կերակրի աղի փաստացի տարեկան թողարկման ծավալները բերված են ԱՐՄՍՍՍՍ-ի տեղեկագրում՝ “Արդյունաբերական կազմակերպություններում հիմնական արտադրատեսակների թողարկումը բնեղեն արտահայտությամբ, հունվար-դեկտեմբեր, 2018 թ.” /16/:

Առանձին արտադրողներից կամ ոլորտի կառավարման մարմիններից տարանջատված տվյալներ դժվար է ձեռք բերել:

### **3. Արդյունաբերական եղանակով պատրաստված սննդամթերքի (ԱՊՍ) արտադրության մեջ յոդացված աղի օգտագործման օրենսդրական դաշտը**

Հայաստանում ՅԱԽ վերացման Ազգային ծրագրի մշակման, իրականացման և ԱՀՅ ռազմավարության ներդրման համար ընդունվել են հետևյալ հիմնական նորմատիվային փաստաթղթերը՝

- 1) ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի թիվ 353-Ն որոշումը՝ “ՀՀ բնակչության սննդում յոդի անբավարարության հետևանքների դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագիրը, ազգային ծրագրով նախատեսված առաջնահերթ (2004-2007 թթ.) միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 902 որոշման մեջ լրացում կատարելու մասին”;
- 2) ՀՀ կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 1863-Ն որոշումը՝ “ՀՀ կառավարության 2004 թ. փետրվարի 12-ի թիվ 353-Ն որոշման մեջ փոփոխություն մտցնելու մասին”:

Թիվ 353-Ն որոշումը ներառում է հետևյալ դրույթները.

- ՀՀ-ում բնակչության սննդում (տնային տնտեսություններում) օգտագործելու համար արտադրվող կամ ներմուծվող աղը պետք է լինի յոդացված, ընդ որում, յոդացված կերակրի աղի մեջ յոդի պարունակությունը պետք է լինի  $40 \pm 15$  միլիգրամ՝ մեկ կիլոգրամի համար (ուժի մեջ է որոշման հրապարակումից հետո 60 օրվա ընթացքում);
- Հանրային սննդի օբյեկտները կամ սննդի արտադրությամբ զբաղվող կազմակերպությունները, կամ անհատ ձեռնարկատերերը պարտավոր են ՀՀ-ում իրացման համար արտադրվող սննդամթերքի մեջ օգտագործել միայն յոդացված կերակրի աղ (բացառությամբ այն դեպքերի, երբ յոդացված կերակրի աղի օգտագործումը չի թույլատրվում արտադրության տեխնոլոգիայով);
- Սննդում օգտագործելու համար նախատեսված յոդացված կերակրի աղի փաթեթի վրա պետք է լինի «Յոդացված կերակրի աղ» նշագրումը, որի ծավալը

*չպետք է պակաս լինի փաթեթի վրա առկա նշագրումների ընդհանուր ծավալի 10 տոկոսից:*

ՅԱԽ վերացման ծրագրային փաստաթղթում (ՀՀ կառավարության No 353 որոշման հավելվածում) հստակ նշված է, որ ՀՀ ԱՆ Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնը (ՀՎԿԱԿ-ը) պատասխանատու է կերակրի աղի բոլոր տեսակներին ներկայացվող պահանջների կիրարկման համար, ներառյալ յոդացված աղի օգտագործման ապահովումը սննդի արդյունաբերության մեջ: 2007 թվականից հետո, Մանուսկրի անվտանգության մասին» ՀՀ օրենքի (2006 թ.) դրույթների հիման վրա, սննդամթերքի մոնիթորինգի (ստուգումների) և ստանդարտների սահմանման լիազորությունները վերապահվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության Մանուսկրի անվտանգության պետական ծառայությանը՝ **ՄԱՊԾ-ին**<sup>1</sup>:

Ծրագրի իրավակարգավորման շրջանակներն էլ ավելի ամրապնդվեցին Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Յունիսեֆ-ի և ՅԳՑ-ի «ԱՀՅ կայունության ապահովման ենթատարածաշրջանային խորհրդակցությունից» հետո (Ալմաթի, 2015 թ.): Հիմք ընդունելով վերջինիս առաջարկները, ՀՀ առողջապահության նախարարությունը, համագործակցելով գյուղատնտեսության նախարարության հետ, մշակեց «Կերակրի աղում յոդի պարունակության պետական վերահսկողության, մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման ու հանրայնացման» կարգ, որն, այնուհետև, հաստատվեց երկու նախարարությունների **համատեղ հրամանով** (ՀՀ ԱՆ՝ No 829-Ա, 23.03.2016թ. և ՀՀ ԳՆ՝ No 74-Ա, 18.03.2016թ.): Համատեղ հրամանը սահմանում է աղում յոդի պարունակության մոնիթորինգի համար պատասխանատու մարմինների գործառույթները, աշխատանքի մեթոդները և ընթացակարգերը՝

- *մանրածախ առևտրի համակարգում, սննդի արդյունաբերության և հասարակական սննդի կազմակերպություններում իրականացնում է ՄԱՊԾ-ը՝ սննդի անվտանգության ոլորտում լիազոր մարմինը (նշանակված ՀՀ կառավարության 21.02.2013թ. No 218-Ն որոշմամբ),*
- *տնային տնտեսություններում իրականացնում է ՀՎԿԱԿ-ը<sup>2</sup>, համակցելով աղի նմուշառումները վարակիչ վարակների օջախների հետազոտությունների հետ (ՀՀ կառավարության 12.02.2004 թ. No 353-Ն որոշում),*
- *կալիումի յոդատով հարստացված կերակրի աղում յոդի պարունակության որոշման մեթոդը; տվյալների փոխանակման և հանրային հաղորդակցության ապահովման կարգն ու ձևերը:*

<sup>1</sup> - 2019 թ. հուլիսին, ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը լուծարվեց; տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունը վերափոխվեց ՀՀ էկոնոմիկայի նախարարության, որն իր կազմում ներառում է գյուղատնտեսության ոլորտը: ՄԱՊԾ-ը վերափոխվեց ՀՀ կառավարությանն առընթեր Մանուսկրի անվտանգության տեսչական մարմնի:

<sup>2</sup> - ՀՎԿԱԿ-ը հանդիսանում է ՀՀ ԱՆ գլխավոր հանրային առողջապահության կազմակերպությունը:

Այդուհանդերձ, համատեղ հրամանը չի պարունակում միասնական համակարգման մեխանիզմ (շահագրգիռ կողմերի, օրինակ ԱՆ, ՍԱՊԾ, արտադրողների և այլ գործընկերների մասնակցությամբ), տվյալների շտեմարանի ստեղծում և սպասարկում, արդյունքների համատեղ վերլուծություն, հաշվետվություն և տեղեկատվության տարածում (ընդհանուր առմամբ, հիմնական շահագրգիռ կողմերի համաձայնեցված գործողությունները հեշտացնելու համար):

Ելնելով նշված համատեղ հրամանի դրույթներից, 2017 թվականին ՍԱՊԾ-ը սկսեց իրականացնել յոդացված աղի տեսչական ստուգումներ (ինչպես տեղական արտադրության, այնպես էլ ներմուծված): Սակայն, ներկրման և շրջանառության փուլերում տարբեր կազմակերպություններից (մաքսատուն, խանութներ, սննդի օբյեկտներ կամ ԱՊՍ արտադրություն) ստացված աղի նմուշների մեջ յոդի խտության վերաբերյալ ՍՍՏՄ 2017-2018 թթ. տվյալները տեսչության կայքում ժամանակին չեն տեղադրվել: Տնային տնտեսություններից վերցրած աղի նմուշներում յոդի մակարդակի վերաբերյալ տվյալները ՀՎԿԱԿ կայքում ընդհանրապես չեն տեղադրվել: ՍՍՏՄ-ից և ՀՎԿԱԿ-ից պաշտոնական գրությունների միջոցով ստացված համախառն տվյալները չեն ընդգրկում տեղեկատվություն աղի աղբյուրների ու տեսակների, նմուշառման վայրի, ազգային ստանդարտից շեղման բնույթի կամ այլ գործոնների մասին (թեև, նմուշների գրեթե 10%-ը չի համապատասխանել ազգային ստանդարտին):

Այսպիսով, Հայաստանում աղի յոդացման համար ձևավորված օրենսդրական դաշտի վերլուծության հիման վրա հնարավոր է անել հետևյալ եզրակացությունները.

- ❖ Հայաստանում ԱՀՅ իրականացման նպատակով ընդունված կառավարության որոշումը հանդիսանում է նորմատիվ ակտ, որը սահմանում է երկրում կերակրի աղի պարտադիր յոդացման պահանջ; տնային տնտեսություններում և սննդի արդյունաբերության մեջ օգտագործելու համար չյոդավորված աղի արտադրությունն ու ներկրումն արգելված է; Հայաստանում ընդունված է և պահպանվում է կերակրի աղում յոդի պարունակության ստանդարտ ( $40 \pm 15$  մգ/կգ, ուժի մեջ է 2007 թվականի հուլիսի 1-ից):
- ❖ Հայաստանում աղի յոդացման կանոնակարգը հստակորեն ներառում է ԱՊՍ արտադրության համար կիրառվող, ինչպես և տնային պայմաններում կերակուրների պատրաստման համար օգտագործվող կամ սեղանի շուրջ ուղղակիորեն սպառվող կերակրի աղը: Սակայն, աղի պարտադիր յոդացման կանոնակարգում առկա է որոշակի անկատարություն, այսինքն՝ դրույթ, որը բացառություն է անում չյոդացված աղի կիրառման համար, հիմնվելով արտադրության տեխնոլոգիայի պահանջների վրա: Վերջինս հանդիսանում է սողանք չյոդացված աղի վաճառքը և օգտագործումը թույլատրելու համար:
- ❖ Հայաստանում, ՅԱԽ Էլիմինացիայի ծրագրի և ԱՀՅ ռազմավարության իրականացման մոնիթորինգը հենվում է զանազան նորմատիվ ակտերի, այդ թվում թվում կառավարության որոշումների և նախարարական հրամանների

վրա: Յողի պարունակության մշտադիտարկումը տնային տնտեսություններում օգտագործվող կերակրի աղում իրականացնում է առողջապահության համակարգի մասնագիտացված կառույցը՝ ՀՎԿԱԿ-ը, մանրածախ առևտրի ցանցում վաճառվող և պատրաստի սննդամթերքի արտադրության մեջ կիրառվող աղում՝ գյուղատնտեսական ոլորտի սննդի անվտանգության պետական ծառայությունը (նախկին ՄԱՊԾ, իսկ 2019թ. մայիս ամսից՝ ՀՀ ԿԵ ՄԱՍ): Վերջինս հանդիսանում է այն կարգավորող մարմինը, որը պատասխանատու է սննդի արդյունաբերության մեջ յոդացված աղի օգտագործման պահանջի կիրարկման համար: ՀՎԿԱԿ-ի և ՄԱՍ-ի փոխազդեցությունը թույլ է:

- ❖ Հայաստանի Հանրապետությունում աղի յոդացման մասին օրենսդրությունը առանձին կարգավորող փաստաթուղթ է (կառավարության որոշում):
- ❖ Կերակրի աղի մեջ յոդի մակարդակի ազգային ստանդարտը ներառված է կարգավորող փաստաթղթում (ՀՀ կառավարության 2004 թ. N 353-Ն որոշում):

#### 4. Աղի և յոդացված աղի սպառման մեջ արդյունաբերական եղանակով պատրաստված սննդամթերքի (ԱՊՍ) ներդրման գնահատումը և ստացված արդյունքների մեկնաբանությունը ԱՀՅ ռազմավարության առընչությամբ

Հիմք ընդունելով Ծրագրի ուղեցույցում առաջարկված սկզբնաղբյուրների շարքը և հիմնական տվյալների տեսակները, սույն պիլոտային ծրագրի ընթացքում ուսումնասիրվել և օգտագործվել են հետևյալ աղբյուրները:

- i. Արդյունաբերական եղանակով պատրաստված աղ պարունակող հիմնական սննդամթերքները և դրանց սպառման մակարդակները.

**ԱՐՄՍՍՍՍ-ը**, տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ) տվյալների հիման վրա, ներկայացնում է տնային տնտեսությունների եկամուտների, ծախսերի և հիմնական սննդամթերքի սպառման դինամիկան: Տեղեկատվության աղբյուրն ընթացիկ ծախսերի, սպառման և եկամուտների **Օրագիրն** է: SSԿԱՀ-ն իրականացվում է ամբողջ հանրապետությունում, ամեն տարի, բնակավայրերի և SS ամենամսյա փոխարինմամբ (ռոտացիայով), ընդգրկելով մոտ 500 տնային տնտեսություն: Սննդամթերքի օգտագործման վերաբերյալ ամենավերջին տեղեկատվությունը ներկայացված է «Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը» ամփոփ զեկույցում /7/, որն ընդգրկում է **12 խումբ** հիմնական մթերային ապրանքների ցանկը՝ դրանց միջին սպառման քանակների հետ միասին, ներառյալ աղ պարունակող սննդամթերքի խմբերը, ինչպիսիք են հացաբուլկեղենը, մսամթերքը, պանիրները և այլն (համեմունքների, սոուսների կամ բույոնի խորանարդիկների խումբը ցանկում չի հիշատակվում):

Տանը սպառված կոնկրետ պարենային ապրանքների xls ցուցակը ներկայացված է “Տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանագերծված միկրոտվյալների շտեմարանում”: Ցուցակը տալիս է որոշակի սննդամթերքների սպառման միջին ամսական մեծությունները մեկ շնչի հաշվով (ցանկն ապահովում է լայն սպառման ԱՊՄ-ների, այդ թվում՝ աղ պարունակող մթերքների բավարար բացվածք, օրինակ, մի քանի տեսակի հաց և մակարոնեղեն, զանազան պանիրներ, երշիկեղեն և այլն) /17/:

Բնակչության առանձին (սեռա-տարիքային) խմբերի կողմից աղ պարունակող սննդամթերքի սպառումը հնարավոր չէ գնահատել, քանի որ ՏՏԿԱՀ (ILCS) արդյունքներով կազմված “**ՏՏ եկամուտների, ծախսերի և հիմնական սննդամթերքի սպառման**” զեկույցը (HCES-ը) տրամադրում է մեկ շնչի հաշվով սպառման միջին տվյալները միայն ընդհանուր բնակչության համար:

ii. Նշված հիմնական սննդամթերքներում աղի մակարդակները և աղի միջին օրական սպառման ընդհանուր քանակում այդ մթերքների հարաբերական ներդրման գնահատումը.

**a.** Ընդհանուր առմամբ, երկու սերտիֆիկացված լաբորատորիաների (ԱՆ/ԱԱԻ և ՍՏԱՆԴԱՐՏ ԴԻԱԼՈԳ ՍՊԸ) 2018-2019 թթ. տարեկան հաշվետվություններից քաղվել է աղ պարունակող 9 խմբի սննդամթերքներում, ներառյալ հիմնական ցուցակի ապրանքներում (հաց, պանիր, մսամթերք, թթու և պահածոյացված բանջարեղեն) աղի պարունակության տիտրաչափական որոշման ավելի քան 200 արդյունք (միջին մեծությունները տես ամփոփ աղյուսակում, հավելված 1): Դրանց մի մասը տրամադրել է Էկոնոմիկայի նախարարությունը (հավաքագրվել է ազգային աշխատանքային խմբի խնդրանքով՝ սննդի արդյունաբերության խոշոր ձեռնարկությունների լաբորատորիաներից):

**b.** Հացի մեջ աղի մակարդակը որոշելու համար օգտագործվել են նաև հացթուխի բաղադրատոմսում (հացի խմորում) աղի պարունակության տվյալները (այս գնահատման արդյունքում ստացվել է  $M = 1,47 \text{ գ}/100 \text{ գ}$ ,  $n = 29$ ):

**c.** Կերակրի աղի խտությունները Հայաստանում սովորաբար սպառվող աղ պարունակող սննդամթերքներում ներկայացված են Հավելված 1-ում և “Հայաստանի բժշկագիտություն” հանդեսում տպագրված հոդվածներում (2020 թ., N 1, էջ 79-87 և N 2, էջ 112-120, ինչպես նաև 2021 թ. N 2-ում՝ տպագրման փուլում):

**d.** Հաշվարկվել է աղի միջին օրական սպառումը յուրաքանչյուր սննդամթերքից, օգտագործելով աղի տոկոսային պարունակությունը՝ բազմապատկած տվյալ մթերքի միջին օրական սպառման վրա (ըստ մարդաշնչի):

iii. Յուրաքանչյուր սննդամթերքի արտադրության համար երկրում ներկայումս օգտագործվող յոդացված աղիմասնաբաժինը.

- a. Հայաստանում պատշաճորեն յոդացված աղ օգտագործող տնային տնտեսությունների մասնաբաժնի վերաբերյալ տեղեկատվությունը ստացվել է հրապարակված աղբյուրներից և ՀՎԿԱԿ կանոնավոր արտաքին մոնիտորինգի արդյունքներից /5, 9, 10, 11/;
- b. Երկրում սովորաբար (առավել լայնորեն) սպառվող հացի արտադրության համար կիրառվող յոդացված աղի մասնաբաժինը հաշվարկվել է «Պատրաստի սննդամթերքում յոդացված աղի օգտագործման աստիճանի գնահատման» արդյունքների հիման վրա /2/;
- c. Պանիրների, մսամթերքի, թթուների և այլնի արտադրության մեջ օգտագործվող յոդացված աղի մասնաբաժինները հաշվարկվել են ՄԱՍՍՍ ստուգումների արդյունքների հիման վրա (2017-2018 թթ.): Բացի այդ, տվյալներ են ստացվել Էկոնոմիկայի նախարարության սննդամթերքի անվտանգության վարչությունից; վերջինս յոդացված աղի օգտագործման վերաբերյալ ինֆորմացիա է խնդրել սննդի արդյունաբերության ձեռնարկություններից և փոխանցել է այն ազգային թիմին):

**Մոդելների և սցենարների ընտրությունը.** Գոյություն ունեցող տվյալների և տեղեկատվության վերլուծության հիման վրա, ազգային թիմը եկել է համաձայնության, որ յոդացված աղի օգտագործմամբ արտադրվող հիմնական սննդամթերքների մասնաբաժինները բնութագրվում են հետևյալ տոկոսներով. խոհանոցային կերակրի աղ՝ 93,4%, հաց՝ 82%, պանիր՝ 7%, մսամթերք և կիսաֆաբրիկատներ՝ 83%, թթու դրած և պահածոյացված բանջարեղեն՝ 44%, մակարոնեղեն՝ 5%, տոմատի մածուկ և մայրնեզ՝ 0%: Մոդելը ենթադրում է, որ յոդացված աղի մեջ յոդի խտությունը կազմում է կերակրի աղի համար ընդունված յոդի ազգային ստանդարտի միջին ցուցանիշը, այսինքն՝ 40 մգ/կգ: Հայաստանը մասնակցել է Առողջապահության համաշխարհային ասամբլեայի 66-րդ նստաշրջանին, որտեղ բոլոր երկրները միաձայն համաձայնվել են կրճատել աղի սպառումը 30%-ով, նպատակ ունենալով մինչև 2025 թվականը հասնել 5 գ/օր թիրախային ցուցանիշին /18/: Ուստի, թիմը որոշեց կիրառել աղի սպառման կրճատման հարաբերական թիրախ՝ 30% սեղանի աղի և բոլոր պատրաստի սննդամթերքների համար (որպես առանձին սցենար), այն պարագայում, եթե առողջապահության նախարարությունը որոշում կայացնի մշակել և իրականացնել աղի սպառման կրճատման քաղաքականություն, նպատակ ունենալով կանխարգելել սիրտ-անոթային հիվանդությունները (որպես վերջնականապես տեղեկացնելու քաղաքականություն մշակողներին այն մասին, թե արդյո՞ք այդպիսի կրճատումը կազդի բնակչության յոդային սնուցման կարգավիճակի վրա):

Որոշվեց կառուցել երկու մոդել, իրականացնելով (1) հիմնական մոդելավորում՝ ընդհանուր բնակչության մեծահասակների խմբի համար և (2) մոդելավորում հղիների և կրծքով կերակրող կանանց խմբի համար, հիմք ընդունելով այն ենթադրությունը, որ այս խմբում սննդամթերքների և յոդի սպառումը գրեթե նույնն է, ինչ որ ընդհանուր բնակչության շրջանում: Որևէ մոդելավորում հնարավոր չեղավ իրականացնել < 2 և 2-



18 տարիքային խմբերի համար՝ սննդամթերքի սպառման տվյալների բացակայության պատճառով:

Աշխատանքային խումբը դիտարկեց **երեք հավանական սցենար**. (1) տնային տնտեսություններում և սննդի արդյունաբերության մեջ տեսականորեն 100% յոդացված աղի օգտագործում (այսինքն՝ յոդի ստացում ողջ սպառված աղից); (2) յոդի ընթացիկ իրատեսական սպառում, հիմնված յոդացված աղ փաստացի օգտագործման տվյալների վրա, այն է 93.4%՝ տնային տնտեսություններում, 82%՝ հացաթխման մեջ, 7%՝ պանրի, 83%՝ մսամթերքի, 44% պահածոյացված բանջարեղենի, 5% մակարոնեղենի և 0% այլ ԱՊՍ արտադրության համար; (3) յոդի սպառման հավանական (ենթադրյալ) մակարդակ՝ աղի սպառումը բոլոր աղբյուրներից 30%-ով կրճատելուց հետո, պահպանելով աղի յոդացման ներկայիս ստանդարտները (որպեսզի որևէ բացասական ազդեցության դեպքում տրվեն հիմնավորված առաջարկություններ ԱՀՅ ազգային ռազմավարության լրամշակման համար):

**Մոդելավորման արդյունքները.** Մոդելավորումն ազգային թիմին հնարավորություն տվեց գնահատել աղ պարունակող վեց հիմնական պատրաստի սննդամթերքների և խոհանոցային աղի ներդրումը յոդի սպառման մեջ՝ ընդհանուր մեծահասակ բնակչության (ոչ հղի) և հղի ու կերակրող կանանց խմբերի համար: Համապատասխան գնահատականները գծապատկերների տեսքով ներկայացված են 1 և 2 գծանկարներում: Հիմնական արդյունքները կայանում են հետևյալում.


- Աղի միջին օրական սպառումը խոհանոցային աղից և վեց հիմնական աղ պարունակող սննդամթերքներից կազմում է մեկ շնչի հաշվով 10.6 գ, որից 4,0 գրամը ստացվում է խոհանոցային աղից, մյուս 4,3 գրամը՝ հացից և 2,3 գրամը՝ մնացած բոլոր աղ պարունակող հիմնական սննդամթերքներից (համակցված ներդրում): Կարելի է ենթադրել, որ աղի սպառումը դիտարկված երկու խմբերում (մեծահասակ բնակչություն և հղի ու կրծքով կերակրող կանայք) էականորեն չի տարբերվում:
- Մոդելավորումը ցույց տվեց, որ հիպոթետիկ սցենար 1-ի դեպքում, այսինքն՝ տնային տնտեսություններում և ԱՊՍ արտադրության մեջ 100% յոդացված աղ օգտագործելու պարագայում, մեծահասակ (ոչ հղի) բնակչությունը և հղի կանայք կստանան այդ խմբերի համար առաջարկված յոդի օրական սպառման (նորմի) համապատասխանաբար 196% և 118% -ը:
- Ներկայումս, ըստ իրատեսական սցենար 2-ի, յոդի սպառումը մեծահասակների և հղի կանանց շրջանում կազմում է առաջարկված օրական սպառման (RNI կամ ԱՕՍ) համապատասխանաբար, 149%-ը և 90%-ը: Այս արդյունքները ձեռք են բերվում տնային տնտեսություններում (93.4%) և ընտրված պատրաստի սննդամթերքների արտադրության մեջ յոդացված աղի օգտագործման հաշվին: Տնից դուրս պատրաստվող (փոքր արտադրողների կողմից մատակարարվող) նմանատիպ մթերքների սպառման վերաբերյալ տվյալներ չկան: Դրսում ուտելը

Հայաստանում այնքան էլ տարածված չէ, ուստի յոդի քանակները սննդային աղի այս աղբյուրներից էական չեն համարվում:

- Սցենար 3-ում, եթե երկրում աղի սպառումը 30%-ով կրճատելու նպատակը ձեռք բերվի և յոդացված աղի օգտագործումը մնա նույն մակարդակի վրա, ինչ որ ներկայումս է, ապա աղի այս նույն (պոտենցիալ յոդացված) աղբյուրները կապահովեն ոչ հղի մեծահասակների և հղի կանանց յոդի ԱՕՍ-ի համապատասխանաբար 105%-ը և 62%-ը:

**Գծապատկեր 1. Յոդի ԱՕՍ-ի (RNI) մեջ յոդացված խոհանոցային աղի և առանձին պատրաստի սննդամթերքների (ըստ մարդաշնչի) ներդրումը՝ %-ով: Հայաստանի Հանրապետություն, (ՈԶ ՀՂԻ) ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐ (յոդի ԱՕՍ-ը՝ 150 մկգ/օր):**


Սցենար (սյունակ) 1 = յոդի պոտենցիալ սպառում (եթե ամբողջ աղը 100%-ով յոդացված է), 2 = յոդի ընթացիկ իրական սպառում (հիմք ընդունելով յոդացված աղի սպառումը 93.4%՝ տնային տնտեսություններում, 82%՝ հացաթխման մեջ, 7%՝ պանրի, 83%՝ մսամթերքի, 44% պահածոյացված բանջարեղենի, 5%՝ մակարոնեղենի և 0% այլ ԱՊՍ արտադրության համար), 3 = յոդի պոտենցիալ սպառում, եթե ձեռք է բերվել աղի սպառման կրճատում 30%-ով, պահպանելով աղի յոդացման ներկայիս ստանդարտը:



**Ծանոթագրություն.** Տարբեր սննդամթերքներով յոդի սպառման տոկոսները ներկայացնում են RNI-ի (ԱՕՍ-ի) այսինքն՝ 150 մկգ/օր նորմի մասնաբաժինները, այլ ոչ թե յոդի միջին օրական սպառման մասնաբաժինները:

**Գծապատկեր 2.** Յոդի ԱՕՍ-ի (RNI) մեջ յոդացված խոհանոցային աղի և առանձին պատրաստի սննդամթերքների (ըստ մարդաշնչի) ներդրումը՝ %-ով: Հայաստանի Հանրապետություն, ՀՂԻ ԿԱՆԱՅՔ (յոդի ԱՕՍ-ը՝ 250 մկգ/օր):

Սցենար (սյունակ) 1 = յոդի պոտենցիալ սպառում (եթե ամբողջ աղը 100%-ով յոդացված է), 2 = յոդի ընթացիկ իրական սպառում (հիմք ընդունելով յոդացված աղի սպառումը 93.4%՝ տնային տնտեսություններում, 82%՝ հացաթխման մեջ, 7%՝ պանրի, 83%՝ մսամթերքի, 44%՝ պահածոյացված բանջարեղենի, 5%՝ մակարոնեղենի և 0% այլ ԱՊՍ արտադրության համար), 3 = յոդի պոտենցիալ սպառում, եթե ձեռք է բերվել աղի սպառման կրճատում 30%-ով, պահպանելով աղի յոդացման ներկայիս ստանդարտը:



**Ծանոթագրություն.** Տարբեր սննդամթերքներով յոդի սպառման տոկոսները ներկայացնում են RNI-ի (ԱՕՍ-ի) այսինքն՝ 250 մկգ/օր նորմի մասնաբաժինները, այլ ոչ թե յոդի միջին օրական սպառման մասնաբաժինները:

**Քննարկում.** Հայաստանում առկա փաստացի տվյալները (Յողային սնուցման հետազոտություն, 2016 թ.) վկայում են, որ բնակչության տարբեր խմբերում յոդի սպառումը գտնվում է շատ լավ վիճակում (եղնելով ՄՅԽՄ չափման արդյունքներից); ուստի, համարվում է, որ երկիրը ձեռք է բերել յոդային սնուցման օպտիմալ մակարդակ: Այնուամենայնիվ, այստեղ հարկ է նշել մի քանի նախազգուշական միջոցառումների մասին՝

- Մեր հետազոտության արդյունքում պարզվել է, որ կերակրի աղի միջին օրական սպառումը խոհանոցային աղի և հիմնական աղ պարունակող սննդամթերքների միջոցով կազմում է **10,6** գրամ: Մինևույն ժամանակ, 2016 թվականին Հայաստանում ԱՀԿ անցկացրած STEPS հետազոտությունը ցույց է տվել /1/, որ աղի միջին սպառումը 18-69 տարեկան մարդկանց շրջանում գտնվում է **9,8** գ/օր մակարդակում՝ 11 գ/օր տղամարդկանց, 8,4 գ/օր կանանց շրջանում: Զուգահեռ ուսումնասիրության մեջ /5/, նատրիումի պարունակությունը չափվել է վերարտադրողական տարիքի կանանց միանվագ մեզի նմուշներում և, ըստ նատրիում/կրեատինին հարաբերակցության (UNaC/Ucr), նատրիումի միջին սպառումը կազմել է 5,5 գ/օր, որը համարժեք է 13.9 գրամ աղի սպառմանը: Ակնհայտ է, որ բնակչության շրջանում աղի սպառման միջին մակարդակի ավելի հուսալի գնահատական ստանալու համար անհրաժեշտ են հետագա հետազոտություններ:
- Բնակչության երկու խմբերում յոդի սպառման ամենամեծ բաժինը ( $> 3/4$ ) բոլոր երեք սցենարներում կարելի է վերագրել յոդացված աղի օգտագործմանը՝ տնային տնտեսություններում և հացաթխման մեջ: Հայաստանում հացը հանդիսանում է կարևորագույն հիմնական սննդամթերքը, որի սպառման ցուցանիշը (մեկ շնչի հաշվով) գերազանցում է Եվրոպական տարածաշրջանի երկրների ճնշող մեծամասնության համապատասխան ցուցանիշները /19/ և շատ մոտ է Միջերկրածովյան տարածաշրջանի երկրներին բնորոշ սպառման մակարդակին ( $\approx 300$  գ/օր) /20/: Հայտնի մոտեցման հիման վրա /19/, աղի պարունակությունը պատրաստի արտադրանքում (թխած հացում) հաշվարկել ենք ըստ «հացթուխի բաղադրատոմսի», բաժանելով խմորի աղի կոնցենտրացիան 1,25 գործակցի վրա (արդյունքում ստացվել է՝  $M=1,47$  գ/100գ;  $n=29$ ): Զուգահեռաբար, սահմանափակ տվյալներ են ձեռք բերվել հացի մեջ ուղղակի չափման միջոցով աղի պարունակության գնահատման վերաբերյալ ( $n = 7$ ). այս դեպքում աղի միջին պարունակությունը 100 գրամ «միջին» հացում կազմել է  $1,33 \pm 0,31$ , որը 9.5%-ով պակաս է, քան «հացթուխի բաղադրատոմսի» հիման վրա հաշվարկված արժեքը: Ուստի, անհրաժեշտ է զարգացնել հացաթխման ոլորտում յոդացված աղի օգտագործման մոնիթորինգի և հացի մեջ աղի պարունակության որոշման կարողությունները՝ յոդի սպառումը այս կարևոր հիմնական սննդամթերքից ճշգրիտ գնահատելու համար:

- Հայաստանում (ինչպես այլուր) ընթանում են սննդակարգերի որոշակի կառուցվածքային փոփոխություններ, որոնք միտված են պատրաստի սննդամթերքի սպառման հարաբերական ավելացմանը; վերջիններս ամբողջ աշխարհում հայտնի են որպես մարդկանց սննդում աղի հիմնական աղբյուր: Հայաստանը բախվում է նաև նատրիումի (աղի) ավելցուկային սպառման հիմնախնդրին; ուստի, ՀՀ կառավարությունը հայտարարել է երկրում մի շարք ոչ վարակիչ հիվանդությունների կանխարգելումը որպես առաջնահերթ խնդիր: Եթե ՀՀ առողջապահության նախարարությունը սկսի իրագործել աղի սպառումը կրճատելու ռազմավարություն, ապա աղ պարունակող հիմնական ԱՊՍ-երի մեջ աղի խտության թիրախները 30%-ով նվազեցնելու համար դեռևս տեղ կմնա, առանց թողնելու բացասական ազդեցություն բնակչության յոդային սնուցման կարգավիճակի վրա (եթե աղի յոդացումը մնա ներկայիս մակարդակում, ապա յոդացված աղի նույն աղբյուրները կապահովեն ոչ հղի մեծահասակների համար յոդի ԱՕՍ-ի 105% -ը): Ինչ վերաբերվում է հղիներին, ապա այս 30% կրճատումը կարող է փոքր-ինչ նվազեցնել յոդի սպառումը հղիների շրջանում (ապահովելով յոդի ԱՕՍ-ի 62%-ը), քանզի յոդի նկատմամբ նրանց ամենօրյա պահանջն ավելի բարձր է: Դա կարող է ավելի շոշափելի դառնալ, եթե ԱՊՍ արտադրության մեջ չյոդացված աղի օգտագործման համար ավելի մեծ թվով «բացառություններ» արվեն կամ ընդլայնվի չյոդացված աղի արտադրությունն ու վաճառքը:

*Որակյալ յոդացված աղով պատրաստված յուրաքանչյուր սննդամթերքից ստացվող յոդի քանակը ներկայացվել է որպես յոդի ԱՕՍ-ի մաս՝ տոկոսային արտահայտությամբ: Բացի այդպիսի գնահատումից, աշխատանքային խումբը հաշվարկել է նաև բոլոր թվարկված սննդամթերքների մասնաբաժինները միջին օրական կտրվածքով սպառվող յոդի **ընդհանուր քանակում՝ ընդունված որպես 100%:** Հավելված 1-ում ներկայացված արդյունքները ցույց են տալիս յուրաքանչյուր սննդամթերքի դերը յոդի միջին օրական սպառման մեջ (բոլոր երեք սցենարներում):*

## **5. ԱՊՍ միջոցով յոդացված աղի օգտագործման ավելացմանը նպաստող գործոնները**

Հայաստանի Հանրապետությունում աղի յոդացման գործող ռազմավարության բարելավման ուժեղ և թույլ կողմերի և հնարավորությունների գնահատումն իրականացվել է, հաշվի առնելով Ծրագրային ուղեցույցում թվարկված յոթ բարենպաստ գործոնների վիճակը ազգային մակարդակում. արդյունքները ներկայացված է ստորև բերված աղյուսակում:



Բարենպաստ գործոնները	Ուժեղ և թույլ կողմերը	Հնարավորությունները
<p>Համապատասխան օրենսդրություն՝ արդյունաբերական եղանակով պատրաստված սննդամթերքում (ԱՊՍ) օգտագործվող աղի յոդացումն ապահովելու համար</p>	<p>2004 թվականին ԱՀՅ վերաբերյալ ընդունված ՀՀ կառավարության N 353 որոշումը հանդիսանում է նորմատիվ ակտ (ենթաօրենսդրություն), որը սահմանում է պարտադիր յոդացման պահանջ երկրում արտադրվող և ներկրվող ողջ կերակրի աղի, ներառյալ տնային տնտեսություններում և հասարակական սննդի ոլորտում, ինչպես նաև ԱՊՍ արտադրության մեջ օգտագործվող աղի համար: Այնուամենայնիվ, աղի պարտադիր յոդացման կանոնակարգում առկա է որոշակի բաց դրույթ, որը <b>բացառություն է անում չյոդացված աղի կիրառման համար</b>, հիմնվելով արտադրության տեխնոլոգիայի պահանջների վրա (առանց նշելու): Վերջինս կարող սողանք դառնալ չյոդացված աղի վաճառքը և օգտագործումը երկրում թույլատրելու համար:</p> <p>Տնային տնտեսություններում օգտագործվող կերակրի աղում յոդի պարունակության մշտադիտարկումն իրականացնում է ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ը, իսկ մանրածախ առևտրի ցանցում վաճառվող և պատրաստի սննդամթերքի արտադրության մեջ կիրառվող աղում՝ Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (ՄԱՏՄ): Վերջինս հանդիսանում է այն կարգավորող մարմինը, որը պատասխանատու է սննդի արդյունաբերության մեջ յոդացված աղի օգտագործման պահանջի կիրարկման համար: ՀՎԿԱԿ-ի և ՄԱՏՄ-ի փոխազդեցությունը թույլ է:</p>	<p>Համատեղ հրամանի հիման վրա (829-Ա և 74-Ա, մարտ 2016 թ.), ՀՀ առողջապահության և էկոնոմիկայի նախարարությունները և ՄԱՏՄ-ը պետք է վերանայեն աղի պարտադիր յոդացման նորմատիվային ակտի անկատար դրույթը (<b>չյոդացված աղի օգտագործման համար արված բացառությունը</b>) և ներդրեն «ԱՀՅ իրական ռազմավարության», որն ընդգրկում է ինչպես տնային տնտեսություններում սպառվող, այնպես էլ սննդի արդյունաբերությանը մատակարարվող ողջ աղը: ՄԱՏՄ-ն իր հրահանգներում պետք է նշի, որ վերոհիշյալ բացառությունը չի տարածվում լայն սպառման ԱՊՍ-երի, հատկապես, հացի արտադրության մեջ օգտագործվող աղի վրա (Հայաստանում հացը առավել կարևոր հիմնական սննդամթերքն է): Յոդացված աղի համընդհանուր կիրառումը հացաթխման մեջ կապահովի յոդով հարստացված աղի հավասար հասանելիությունը բնակչության բոլոր խմբերին:</p> <p>Շահագրգիռ կողմերը պետք է ստեղծեն գերակա մեխանիզմ (կոմիտե կամ խորհուրդ)՝ ծրագրի վերահսկողությունը ոլորտների շրջանակներում և դրանց սահմաններից դուրս համակարգելու համար:</p> <p>ԱՀՅ մոնիտորինգի վերաբերյալ տեղեկատվության մեջ պետք է նշվի աղի աղբյուրը և տեսակը, նմուշառման վայրը, ազգային ստանդարտից շեղումը (այս հարցը լուծելու համար պետք է անցկացվի քննարկում):</p>



<p>Աղի յոդացման ստանդարտները հիմնված են աղի ընդհանուր սպառման վրա, ներառյալ ԱՊՍ-ից ստացված աղը</p>	<p>Հայաստանում ընդունված աղի պարտադիր յոդացման ստանդարտը (<math>40 \pm 15</math> մգ յոդ/կգ աղին) հանդիսանում է վերոնշյալ կանոնակարգի կենտրոնական դրույթը: Ստանդարտը հիմնված է աղի սպառման ընդհանուր քանակի վրա, ներառելով պատրաստի սննդամթերքից ստացվող աղը: Ազգային ստանդարտի համարժեքությունը հաստատվել է բնակչության յոդային սնուցման կարգավիճակի ուսումնասիրություններում՝ ՄՅԽ մեդիանայի հիման վրա, հաշվի առնելով յոդի բոլոր աղբյուրները մարդու սննդակարգում (տես գլուխ 2):</p> <p>Երկրի ԱՀՅ կանոնակարգը սահմանում է, որ հետագա բոլոր ուղեցույցները, ներառյալ սննդի արդյունաբերության ստանդարտները («տեխնիկական պայմանները») հղում անեն յոդացված աղի պարտադիր օգտագործման կանոնակարգին: Սակայն, ելնելով <b>«բացառության»</b> կարգով չյոդացված աղ օգտագործելու հնարավորությունից, 1-2 տեսակի ԱՊՍ արտադրողներ (օրինակ, աղաջրային պանիր և թթու դրած բանջարեղեն) գործում են իրենց իսկ ուղեցույցների համաձայն և որոշ չափով օգտագործում են չյոդացված աղ:</p>	<p>Դա ակնհայտ է հետևյալից.</p> <ol style="list-style-type: none"> <li>1. 2005 և 2016 թթ. ուսումնասիրությունների համաձայն, երկրի բնակչությունն ունի պատշաճ յոդային սնուցման կարգավիճակ և պաշտպանված է յոդի անբավարարությունից;</li> <li>2. ՄՍՍՄ աուդիտի արդյունքների համաձայն (2018/19 թթ.), սննդամթերք վերամշակող ձեռնարկությունների մեծ մասն օգտագործում է յոդացված աղ և դրանց տեխնիկական բնութագրերը ներառում են հստակ հղում սննդի արդյունաբերության մեջ յոդացված աղի պարտադիր օգտագործման մասին N 353 որոշմանը;</li> <li>3. Այնուամենայնիվ, սննդի վերամշակման առանձին ոլորտներում չյոդացված աղի օգտագործումը դեռևս կարող է որոշակի նշանակություն ձեռք բերել, եթե այդ աղի մասնաբաժինը ժամանակի ընթացքում շարունակի ավելանալ, կամ երբ միջոցներ ձեռնարկվեն ազգային մակարդակում աղի սպառումն կրճատելու ուղղությամբ: Հետևաբար, շահագրգիռ կողմերը պետք է ջանան վերականգնել ԱՀՅ ծրագրի համակարգման մեխանիզմը՝ ապահովելու յոդի անբավարարության վերացման կայունությունն ապագա սերունդներ համար:</li> </ol>
<p><b>Սննդամթերքի վերահսկողության</b> պրոտոկոլները՝ ԱՊՍ արտադրության մեջ յոդացված աղի օգտագործման մոնիթորինգի և տեսչական ստուգումների և ապահովման և</p>	<p>Յոդացված աղի մոնիթորինգը և տեսչական ստուգումներն անց են կացվում աղի արտադրության (ԱԱԿ) և ներկրման փուլերում, ինչպես նաև մանրածախ առևտրի, հասարակական սննդի և սննդի արդյունաբերության մակարդակներում, հնարավորություն տալով շտկել (կամ մերժել) թեր- կամ գեր-հարստացրած աղը</p>	<p>2017 թվականին ՀՀ ԱՆ առողջապահության ազգային ինստիտուտը, ՅԳՑ (IGN) աջակցությամբ, իրականացրեց նախագիծ Հայաստանում ՅԱԽ վերացման ազգային ծրագրի կարգավիճակի գնահատման վերաբերյալ, շրջափակելով երկրում ԱՀՅ ռազմավարության առաջընթացը: Նախագծի արդյունքներն ու եզրակա-</p>





<p>համապատասխան կանոնակարգի կիրարկման համար:</p>	<p>նախքան դրա մատակարարումն ու օգտագործումը: 2016 թվականի Համատեղ հրամանով ընդունված պրոտոկոլը սահմանում է կերակրի աղում յոդի պարունակության վերահսկման գործառնությունները, մեթոդներն ու ընթացակարգերը: Պրոտոկոլը ներկայացնում է նաև ԱՊՄ արտադրության մեջ յոդացված աղի օգտագործման տեսչական հսկողության և կիրարկման համար պատասխանատու լիազոր մարմինն (տես, Գլուխ): Հանրային առողջապահության գլխավոր գործակալությունը՝ ՀՎԿԱԿ-ը իրականացնում է յոդի պարունակության մոնիթորինգ տնային տնտեսություններում օգտագործվող աղում: Սակայն, ՄԱՍՄ և ՀՎԿԱԿ հաշվետվությունները ժամանակին չեն հրապարակվում իրենց կայքերում: Պաշտոնական հարցումների միջոցով ստացված տվյալները չեն նշում հետազոտված աղի աղբյուրը և տեսակը, նմուշառման վայրը, ազգային ստանդարտից շեղման բնույթը: Շահագրգիռ կողմերի հանդիպումներ, որ անհրաժեշտ են ծագող խնդիրների լուծման համար, չեն անցկացվում:</p> <p>ՄԱՍՄ-ը և ՀՎԿԱԿ-ը ունեն բավարար լաբորատոր պոտենցիալ՝ աղի մեջ յոդի որոշման համար:</p>	<p>ցույթունները տրամադրվեցին շահագրգիռ կողմերին (առաջին հերթին, ՄԱՍՄ-ին և ԱԱԿ-ին):</p> <p>Վերոհիշյալ գնահատման առաջարկությունների հիման վրա հա-մաձայնություն ձեռք բերվեց, ի թիվս այլոց, վերանայել 2016 թ. Համատեղ հրամանը, որպեսզի հրամանում առաջարկվի համակարգման մեխանիզմ (ՀՎԿԱԿ, Էկոնոմիկայի նախարարության, ՄԱՍՄ, աղի և սննդի արդյունաբերության մասնակցությամբ), որը կապահովի ԱՊՄ արտադրության մեջ յոդացված աղի մոնիտորինգ և տեսչական ստուգումներ (հատկապես աղ պարունակող հիմնական սննդամթերքների համար):</p> <p>Կանոնակարգը պետք է նախատեսի մոնիտորինգի տվյալների և կիրարկման գործողությունների արդյունքների շտեմարանի ձևավորում և պահպանում; ապահովի տվյալների համատեղ վերլուծություն, հաշվետվությունների պատրաստում և տեղեկատվության տարածում՝ ընդհանուր առմամբ, նպատակ ունենալով նպաստել հիմնական շահագրգիռ կողմերի համաձայնեցված գործողություններին:</p>
<p>Սննդի արդյունաբերության ոլորտում իրազեկության, ներգրավվածության և համապատասխան գործունեության բարելավման մեխանիզմներ</p>	<p>ՀՀ-ում ԱՀՅ ներդրման սկզբնական փուլում (2005-07 թթ.), իրազեկման բարելավմանն ուղղված գործունեությունը գլխավորում էր ՀՀ ԱՆ Միջմասնագիտական աշխատանքային խումբը (ՄԱԽ), ներգրավելով սննդի և աղի արդյունաբերության մասնագետների: Այնուհետև, հիմնվելով «Սննդամթերքի անվտանգության մասին» (2006 թ.) ՀՀ օրենքի վրա, սննդամթերքի մոնիտորինգի և</p>	<p>Հանդիպումներ և քննարկումներ կայացան ՄԱՍՄ-ի, Էկոնոմիկայի նախարարության, ԱԱԿ-ի և ԱՆ ԱԱԻ բարձրաստիճան պաշտոնյաների հետ և որոշվեց.</p> <p>1. Հաշվի առնելով «Սննդամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի (2006 թ.) դրույթները և ՀՀ կառավարության 21.02.2013 թ. No 218-N որոշումը, ՄԱՍՄ-ը, համագործակցելով ՀՎԿԱԿ-ի և ԱԱԻ-ի</p>



ստանդարտների սահմանման գործառույթը ՀՎԿԱԿ-ից փոխանցվեց ՄԱՏՄ-ին: ՄԱԽ-ը դադարեց գործել, իսկ մինչև 2017 թվականի վերջը երկրում չկար որևէ մեխանիզմ՝ ԱՊՍ մեջ միայն յոդացված աղ օգտագործելու պահանջի մասին արդյունաբերությանը տեղեկացնելու համար: Բարեբախտաբար, ԱԱԿ-ը շարունակում է մնալ ԱՀՅ ջատագովը. Կոմբինատը գերակշռում է աղի շուկայում և հետևողականորեն ու համարժեքորեն յոդացում է իր կերակրի աղի արտադրանքը: Ներկայումս երկրում գոյություն չունի որևէ մեխանիզմ՝ աղի և սննդի արդյունաբերության, հանրային առողջապահության և սննդամթերքի անվտանգության ոլորտներից մասնագետների կանոնավոր ներգրավման, տեղեկատվության փոխանակման և առաջընթացի համատեղ կառավարման համար: Վերջերս կատարված ուսումնասիրությունը ցույց է տվել, որ չնայած ԱՊՍ արտադրության մեջ յոդացված աղ օգտագործելու նախընտրելի պրակտիկային, սնունդ արտադրողներից շատերը, ինչպես կարելի է նկատել, չունեն բավարար գիտելիքներ՝ յոդի, որպես վահանաձև գեղձի գործունեության համար կենսականորեն անհրաժեշտ միկրոտարրի մասին, ՅԱԽ հիմնախնդրի և յոդով հարստացված կերակրի աղի միջոցով ՅԱԽ կանխարգելման մասին:

Չկան նպատակային հաղորդակցության ծրագրեր, որպեսզի վերացվեն գիտելիքների պակասը և բոլոր այն թյուրընկալումները, որոնք աջակցում են որոշ ԱՊՍ արտադրողների շրջանում չյոդացված աղի պահանջարկին:

հետ, կաջակցի ՄԱԽ վերականգնմանը;

2. ՄԱՏՄ-ը կանդրադառնա գիտելիքների պակասին և թյուրընկալումներին, որոնք խրախուսում են որոշ ԱՊՍ արտադրողների շրջանում ոչ յոդացված աղի պահանջարկը (հաղորդակցության նպատակային գործողությունների միջոցով):

3. ՀՀ Պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի սննդի անվտանգության լաբորատորիան նախաձեռնելու է հետազոտություն, նպատակ ունենալով հստակեցնել յոդացված աղի օգտագործման պատճառով որոշ ապրանքների (տեղական աղաջրային պանիրներ) հյուսվածքի, գույնի կամ համի հնարավոր փոփոխությունների վերաբերյալ սխալ ընկալումները: Ակնկալվում է, որ ուսումնասիրությունը կտրամադրի ապացույցներ, որոնք անհրաժեշտ են այս ոլորտում ենթադրյալ մարտահրավերները հաղթահարելու համար (ի վերջո, երբ ապացույցներ լինել, վերոհիշյալ բացառությունները կարող են սահմանափակվել փոքրաթիվ ապրանքներով, որոնք յոդային սնուցման հարցում առանցքային նշանակություն չունեն):

4. Էկոնոմիկայի նախարարությունը կտրամադրի տվյալներ կերակրի աղի ներմուծման վերաբերյալ, իսկ Ավանի աղի կոմբինատը (ԱՍԿ)՝ իր ներքին արտադրության և պաշարների մասին; այս գործընկերները (որպես ՄԱԽ անդամներ) կմասնակցեն երկրում աղի մատակարարման ընդհանուր իրավիճակի գնահատմանը:



<p>Հաղորդակցության համապարփակ ծրագիր, որտեղ ներկայացված են նախապես ընտրված լսարանները, աշխատանքի մեթոդները և հաղորդագրությունների (զեկույցների) թեմաները, ներառյալ աղի սպառման կրճատման հարցերը</p>	<p>ԱՀՅ ծրագրի նորմատիվ փաստաթղթերում ներկայացված են նաև հաղորդակցության միջոցառումների պլաններ: 2005-2007 թվականներին, ՅԱԽ վերացման ծրագրի շրջանակներում, ՅՈՒՆԻՄԵՏ-ի աջակցությամբ, իրականացվել են դասընթացներ, առողջապահական կրթության և սոցիալական մոբիլիզացիայի միջոցառումներ, նպատակ ունենալով բարելավել գիտելիքները ՅԱԽ կանխարգելման և յոդացված աղի սպառման վերաբերյալ:</p> <p>Գործունեության առանցքում, սակայն, առողջապահական ոլորտի մասնագետների վերապատրաստումն էր: Ըստ էության, Հայաստանին հաջողվեց հասնել երկրում ԱՀՅ ներդրման՝ առանց հաղորդակցության լայնածավալ հանրային արշավի: Հետագայում, այս միջոցառումները չեն ներդրվել ոչ ՀՎԿԱԿ-ի, ոչ էլ ՍՍՏՍ-ի կամ մեկ այլ շահագրգիռ մարմնի աշխատանքային պլաններում, որպեսզի հաղթահարվեն այն թյուրիմացությունները, որոնք խրախուսում են չյոդացված աղի պահանջարկը: Հայաստանում ՌՎՀ դեմ պայքարը նշվել է որպես գերակա խնդիր ընդունվել են չորս ռազմավարական ծրագրեր, որոնք առաջարկում են ՌՎՀ կանխարգելման միջամտություններ: Սակայն, դրանց մեջ աղի սպառման կրճատման կամ սննդամթերքում աղի պարունակության նվազեցման գործողություններ չկան:</p>	<p>Հենց որ ՅԱԽ վերացման ծրագրի համար պատասխանատու արդյունավետ ազգային մարմին վերստեղծվի (կոմիտե, խորհուրդ կամ ՄԱԽ), հարկավոր կլինի մշակել համապարփակ հաղորդակցման ծրագիր՝ նախապես որոշված լսարաններով, հաղորդագրության թեմաներով և աշխատանքի մեթոդներով:</p> <p>ԱՀՅ ռազմավարության հաղորդակցությունը պետք է լինի ՀՀ ԱՆ (ՀՎԿԱԿ և ԱԱԻ), էկոնոմիկայի նախարարության և ՍՍՏՍ-ի ընդհանուր ԻԿՀ գործունեության մի մասը: Գործողությունները պետք է լրացնեն գիտելիքների պակասը և պարզաբանեն թյուրընկալումները, որոնք խրախուսում են չյոդացված կերակրի աղի պահանջարկը սննդի արդյունաբերության մեջ և բնակչության առանձին խմբերում:</p> <p>Հաղորդակցման պլանը կներառի թեմատիկ նյութեր աղի սպառման կրճատման վերաբերյալ, հենց որ ՀՀ կառավարությունը մշակի և ընդունի համապատասխան ռազմավարություն, ներկայացնելով բնակչության կողմից կերակրի աղի սպառման առավելագույն թիրախը և տարբեր պատրաստի սննդամթերքներում նատրիումի պարունակության թիրախը:</p>
<p>Տնային տնտեսությունների հետազոտություն (SSUՕՀ/HCES, ըստ դիետայի, սննդային կարգավիճակի և այլն), նախատեսված</p>	<p>ՀՀ վիճակագրական կոմիտեն (ԱՐՄՍՏՍՍ-ը) տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության (SSԿԱՀ/ILCS) տվյալների հիման վրա ներկայացնում է տնային տնտեսությունների եկամուտների,</p>	<p>ՀՀ ԱՆ/ԱԱԻ և ՍՍՏՍ-ը, համագործակցելով ԱՐՄՍՏՍՍ-ի հետ, պետք է վերանայեն «ՏՏԿԱՀ անձնագերծված շտեմարանի» միկրոտվյալների ցանկը, նպատակ ունենալով ներկայացնել ավելի տարանջատված տվյալներ աղ</p>



<p>հիմնական աղ պարունակող ԱՊՍ սպառման վերաբերյալ տեղեկատվություն հավաքելու համար</p>	<p>ծախսերի և հիմնական սննդամթերքի սպառման դինամիկան:</p> <p>Հետազոտություններն իրականացվում են ամեն տարի, 500 տնային տնտեսությունների ամենամսյա փոխարինմամբ (ռոտացիայով): Միկրոտվյալների ցանկը տալիս է որոշակի սննդամթերքների սպառման միջին ամսական մեծությունները մեկ շնչի հաշվով: Ցանկն ապահովում է լայն սպառման ԱՊՍ-ների, այդ թվում՝ աղ պարունակող մթերքների բավարար բացվածք: Այնուամենայնիվ, բնակչության տարբեր խմբերում ԱՊՍ սպառման վերաբերյալ տվյալները հասանելի չեն: Միջոցների սղության պատճառով, ՀՀ-ում սննդակարգի կամ սնուցման կարգավիճակի գնահատման օգնությամբ հիմնական աղ պարունակող ԱՊՍ սպառման վերաբերյալ հետազոտություններ չեն իրականացվում:</p>	<p>պարունակող լայն սպառման մթերքների՝ հացահատիկի հիմքով (հաց, խմորեղեն, մակարոնեղեն) կամ լոլիկի հիմքով (հյութեր, մածուկ, պահածոներ) մթերքների, սուսների և այլ ԱՊՍ-երի վերաբերյալ:</p> <p>Այս առումով, նպատակահարմար է առաջարկել ԱՐՄՍՍՍՍ-ի ՏՏԿԱՀ բաժնին դառնալ համակարգման մեխանիզմի մասնակից (անդամ), որպեսզի բնակչության կողմից սպառվող կերակրի աղի ընդհանուր քա-նակում խոհանոցային աղի և ԱՊՍ արտադրության համար կիրառվող աղի ներդրման վերաբերյալ տվյալները լինեն հասանելի:</p>
<p>ԱՀՅ ազգային ռազմավարությունն ըստ վերոնշյալ կետերի ամրապնդելու համար առկա ֆինանսական և կադրային ռեսուրսներ</p>	<p>ԱՀՅ ռազմավարության կայունությունն ամրապնդելու համար ֆինանսական և մարդկային ռեսուրսները սահմանափակ են: ՅԱԽ վերացման ազգային ծրագրի բաղադրիչները բաժանված են հանրային առողջապահության (ՀՎԿԱԿ և ԱԱԻ) և սննդամթերքի անվտանգության գործակալությունների միջև: Սննդամթերքի անվտանգության տեսուչները լավ չեն պատկերացնում ԱՀՅ առողջապահական օգուտները:</p> <p>Յողային սնուցման հետազոտություններն իրականացվել են արտաքին օգնության միջոցով (ՄՅԽ թեստերը կատարվել են արտերկրում՝ յոդի որոշման հեղինակավոր լաբորատորիաներում): Դեռևս 2005 թվականին խնդիր է դրվել քննության առնել ՄՅԽ որոշման ազգային լաբորատորիայի ստեղծման հնարավորությունը; դրա ան-</p>	<p>ԲԱԽ-ի վերականգնումից ու ՅԱԽ վերացման ազգային ծրագրի ղեկավարի նշանակումից հետո, շահագրգիռ կողմերը պետք է մշակեն քարոզչության ռազմավարություն, նպատակ ունենալով հայթայթել միջոցներ հետևյալ աշխատանքների համար՝</p> <p>օրենսդրական դաշտի հստակեցում (բացառությունների վերանայում); սննդի անվանգության տեսուչների վերապատրաստում (ԱՀՅ կիրարկման առողջապահական հարցերի վերաբերյալ); մոնիթորինգի ցուցանիշների ընդլայնում (ԱՊՍ սպառման և աղի պարունակության տվյալների հավաքագրում): Առողջապահության նախարարությունը կամրապնդի բիոմոնիթորինգի պոտենցիալը, ներդնելով մեզում յոդի որոշման թեստը ՀՎԿԱԿ-ի նորաստեղծ</p>

	հրաժեշտությունը վերահաստատվել է նաև ՀՀ կառավարության 2014 թ. N 40 որոշման մեջ: Սակայն, ՄՅԽ կանոնավոր անալիզների անցկացման համար մասնագիտացված լաբորատորիա առայժմ չկա:	Ազգային ռեֆերենս լաբորատորիայում:
--	---	-----------------------------------

## 6. Գործողությունների ազգային պլան

Սույն գնահատման արդյունքների հիման վրա ուրվագծվել է գործողությունների ազգային պլան, որը ներկայացնում է Հայաստանում աղի յոդացման ավելի կատարյալ ռազմավարության մշակման ու իրականացման համար առաջարկվող քայլեր, որոնք նպատակ ունեն ապահովել երկրի բնակչության աղեկվատ յոդային սնուցման կայուն կարգավիճակ: Դրանք կայանում են հետևյալում՝

1. ՀՀ առողջապահության նախարարությանը համագործակցելով՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության և ՀՀ կառավարությանը ենթակա Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՄԱՏՄ) հետ՝

- վերանայել Հայաստանում կերակրի աղի պարտադիր յոդացման օրենսդրական դաշտում առկա բացը (“բացառությունը”); առաջարկել փոփոխություն մտցնել ԱՀՅ կանոնակարգում, նպատակ ունենալով հասնել “ԱՀՅ իրական ռազմավարության” ներդրման, որն ընդգրկում է ինչպես տնային տնտեսություններում սպառվող, այնպես էլ սննդի արդյունաբերությանը մատակարարվող ողջ աղը; այնուհետև, ՄԱՏՄ հրահանգներում և պատրաստի սննդամթերքների արտադրության ուղեցույցներում տալ հստակ հղում միայն յոդացված աղ կիրառելու մասին ՀՀ կառավարության N 353 որոշմանը; զուգահեռաբար, հստակորեն նշել այն մթերքները (օրինակ, աղաջրային պանիրները), որոնք կարող են արտադրվել չյոդացված աղի օգտագործմամբ (երբ կան ապացույցներ, որ յոդացված աղի կիրառումը տեխնոլոգիապես անհնար է):

2. Վերականգնել միջգերատեսչական Բազմամասնագիտական աշխատանքային խումբը (ԲԱԽ) և նշանակել ՅԱԽ վերացման ազգային ծրագրի համակարգող (ղեկավար); բարելավել ԱՀՅ վերաբերյալ վերջին կարգավորող փաստաթուղթը՝ ՀՀ առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների համատեղ հրամանը (2016թ.), ներառելով փաստաթղթում լրացուցիչ դրույթ, որը կամրագրի ԲԱԽ կազմը (նախագահ և անդամներ), ներկայացված տարբեր ոլորտներից և գործընկեր կազմակերպություններից՝ առողջապահությունից (ԱԱԻ և ՀՎԿԱԿ), էկոնոմիկայից, սննդի անվտանգությունից (ՄԱՏՄ), աղի կոմբինատից (ԱԱԿ), առևտրի և սննդամթերք արտադրողների ասոցիացիաներից, ՁԼՄ-ներից և սպառողական ՀԿ-ներից; ԲԱԽ-ի համար մշակել տեխնիկական առաջադրանք և ապահովել ԱՀՅ ռազմավարության իրականացման վերահսկողությունը, նպատակ ունենալով համախմբել շահագրգիռ

կողմերին, որպեսզի նրանք կարողանան համատեղ ղեկավարել ծրագրի առաջընթացը, վերլուծել ընթացիկ ինֆորմացիան, կայացնել որոշումներ խոչընդոտների վերաբերյալ և հրապարակայնության միջոցով ապահովել կանոնավոր հաշվետվողականություն:

3. ՀՀ առողջապահության նախարարությանը և ՄՍՏՄ-ին՝

- վերանայել ԱՀՅ մոնիթորինգի ընթացակարգը, ստեղծել և պահպանել մշտադիտարկման տվյալների և աուդիտի արդյունքների շտեմարան, նշել հետազոտված աղի աղբյուրներն ու տեսակները, նմուշառման վայրը, ազգային ստանդարտից շեղման բնույթը և այլն: Հիմնական շահագրգիռ կողմերի համաձայնեցված գործողությունները հեշտացնելու նպատակով, անհրաժեշտ է ապահովել տվյալների համատեղ գնահատում և տեղեկատվության տարածում, կազմակերպել ԱՀՅ մշտադիտարկման արդյունքների ամփոփմանը նվիրված եռամսյակային հանդիպումներ, ինչպես նաև գումարել տարեկան ժողով, քննարկել ծրագրի ձեռքբերումներն ու կարիքները:

4. Ամրապնդել նախարարությունների, տեսչական մարմինների, գիտության և կրթության ոլորտի և սննդի արդյունաբերության փոխգործակցությունն ԱՀՅ իրականացման ընթացիկ կարգավորումների շուրջ (մոնիթորինգ, աուդիտ և կիրարկում), որպեսզի՝

- a. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը (ԷՆ) և Ավանի աղի կոմբինատը (ԱԱԿ) տրամադրեն տվյալներ կերակրի աղի ներմուծման (ԷՆ) և ներքին արտադրության ու մատակարարման վերաբերյալ (ԱԱԿ) և մասնակցեն երկրում աղի մատակարարման ընդհանուր իրավիճակի գնահատման աշխատանքում (միասին՝ ԷՆ և ԱԱԿ);
- b. Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը (ՄՍՏՄ) տրամադրի տվյալներ մանրածախ առևտրի և սննդի արդյունաբերության մակարդակներում կերակրի աղի կանոնավոր մոնիտորինգի վերաբերյալ և ապահովի տվյալների վերլուծություն (տեղեկատվություն հետազոտությունների աշխարհագրության, աղի աղբյուրների և տեսակների, ստանդարտից շեղվելու մասին);
- c. Անցկացվեն հաղորդակցության թիրախային միջոցառումներ աղ վաճառողների և պատրաստի սննդամթերք արտադրողների շրջանում, նպատակ ունենալով լրացնել համապատասխան գիտելիքների պակասը և պարզաբանել բոլոր այն թյուրընկալումները, որոնք խրախուսում են չողացված աղի պահանջարկը:
- d. Երևանի պետական համալսարանի կենսաբանական ֆակուլտետի սննդի անվտանգության լաբորատորիան նախաձեռնի հետազոտություններ, պարզելու արդյո՞ք որոշ պատրաստի սննդամթերքների (օրինակ, աղաջրային պանիրների) արտադրության մեջ յոդացված աղի օգտագործումը կարող է բերել դրանց կառուցվածքի, գույնի կամ համի փոփոխության: Արդյունքում կարող են ստացվել ապացույցներ առկա թյուրընկալումները հաղթահարելու համար (ի վերջո, եթե կան



այդպիսի ապացույցներ, ապա վերոհիշյալ բացառությունը կարող է տարածվել յոդային սնուցման համար առանցքային նշանակություն չունեցող մթերքների վրա):

e. Անցկացվի աշխատանքային խմբի հանդիպում (ապրիլ, 2020թ.) և ներկայացվեն սույն գնահատման արդյունքներն ու եզրակացությունները, իսկ այնուհետև յուրաքանչյուր ոլորտում մշակվեն համապատասխան գործողությունների պլաններ:

5. Մշակել հաղորդակցության միջոցառումների համապարփակ ծրագիր, ներառյալ նախապես ընտրված ունկնդիրների լսարանները, հիմնական ուղերձները և աշխատանքի մեթոդները (ընդգրկել բուժաշխատողներին, սննդի տեսչության աշխատակիցներին, ՋԼՄ-ների ներկայացուցիչներին և, ընդհանուր առմամբ, ողջ հանրությանը); ԱՀՅ ռազմավարության վերաբերյալ տեղեկատվության, կրթության և հաղորդակցության (ՏԿՀ, *անգլ. IEC*) միջոցառումներն ընդգրկել առողջապահության (ՀՎԿԱԿ և ԱԱԻ), էկոնոմիկայի նախարարությունների և ՍՍՏՍ շրջանակներում իրականացվող ՏԿՀ աշխատանքների ընդհանուր պլանում; երբ որ Հայաստանում մշակվի և ընդունվի աղի օգտագործման կրճատման ռազմավարություն, վերանայել ՏԿՀ պլանը և միջոցառումներում ներառել աղի օգտագործման կրճատմանը նվիրված ուղերձներ:

6. Առողջապահության ազգային ինստիտուտին և ՍՍՏՍ-ին, համագործակցելով ԱՐՄՍՍՍՍ-ի հետ՝

- նախաձեռնել Տնային Տնտեսությունների Կենսամակարդակի Հետազոտության (ՏՏԿՀ) Միկրոտվյալների Բազայի վերլուծություն, նպատակ ունենալով պարզել աղ պարունակող որոշ սննդատեսակների վերաբերյալ ավելի մանրամասն (դեգազրեզացված) տվյալներ ներկայացնելու հնարավորությունը, օրինակ, լայնորեն օգտագործվող պատրաստի հացահատիկային սննդամթերքների (հաց/խմորեղեն), լոլիկի հիմքով մթերքների (հյութեր, մածուկ, պահածոներ), սոուսների համար: ԱՐՄՍՍՍՍ-ի ՏՏԿՀ Բաժինն ընդգրկել ծրագրի շահագրգիռ կողմերի համակարգման մեխանիզմում (այսինքն՝ ԲԱԽ-ում), նպատակ ունենալով նպաստել տնային տնտեսություններում օգտագործվող և պատրաստի սննդամթերքի արտադրության մեջ կիրառվող աղի քանակների վերաբերյալ պատեհժամ և ճշգրիտ տեղեկատվության հասանելիությանը, որի պարագայում հնարավոր կլինի գնահատել նշված երկու աղբյուրների ներդրումն օրական ընդունվող աղի ընդհանուր քանակում:

7. Ազգային մակարդակում պարբերաբար կատարել սննդակարգերի և սնուցման հետազոտություններ, որոնք ընդգրկում են տնային տնտեսություններում յոդացված կերակրի աղի օգտագործման, յոդային սնուցման կարգավիճակի և աղի օրական ընդունման գնահատումը; հնարավորության դեպքում, ուսումնասիրել այս գործոնների փոխհարաբերությունները:

8. Մշակել և ՀՀ ԿԳՄՍ նախարարության Գիտության կոմիտեին ներկայացնել գիտական թեմաների հայտեր, որպեսզի ծրագրի շահագրգիռ կողմերը



հնարավորություն ունենան հավաքագրել հետազոտությունների համար անհրաժեշտ ռեսուրսներ և կարողանան լրացնել յոդացված աղի օգտագործմամբ պատրաստված հիմնական սննդամթերքներում աղի պարունակության վերաբերյալ տեղեկատվության պակասը (ենթադրելով, որ այդ սննդամթերքները յոդի հիմնական աղբյուրներն են մեր սննդակարգում), ինչպես նաև հայթհայթել տվյալներ որոշ պատրաստի մթերքների (աղաջրային պանիրներ, բանջարեղենային թթուներ) արտադրության մեջ յոդացված աղի օգտագործման խոչընդոտների վերաբերյալ:

## Գրականության ցանկ

1. ARMENIA STEPS Survey, 2016-2017. Fact Sheet”:  
[https://www.who.int/ncds/surveillance/steps/Armenia\\_2016\\_STEPS\\_FS.pdf](https://www.who.int/ncds/surveillance/steps/Armenia_2016_STEPS_FS.pdf)
2. H.Ts.Aslyan, N.E.Sergeeva, A.A.Zaqaryan. About assessment of the extent to which iodized salt is used in processed foods and food processors’ level of knowledge on iodine nutrition. J.MedSciArm., 2018, v.LVIII, N 4, p 3-14.
3. Ministry of Health of Armenia, National Statistical Service of RA. **Gerasimov G.** Report on results of a national representative survey of iodine nutrition and implementation of universal salt iodization program in Armenia. Yerevan: UNICEF, 2005.
4. F. van der Haar, G.Gerasimov, V.Q.Tyler et al. Universal salt iodization in the Central and Eastern Europe, Commonwealth of Independent States (CEE/CIS) Region during the decade 2000–09. Food and Nutrition Bulletin, vol. 32, no. 4 (Suppl.), 2011, 124 p.
5. Hutchings N, Aghajanova E, et al. Constituent analysis of iodine intake in Armenia. Public Health Nutr.: 2018, N 21(16), p. 2982-2988 <https://www.ncbi.nlm.nih.gov/pubmed/30189914>.
6. Statistical Committee of the Republic of Armenia (ARMSTAT): Statistical yearbook of Armenia, Yerevan, 2018: <https://www.armstat.am/en/?nid=586&year=2018>
7. SOCIAL SNAPSHOT AND POVERTY IN ARMENIA. Statistical and analytical report, based on the findings of 2017 Integrated Living Conditions Survey (ARMSTAT), 2018: <https://www.armstat.am/am/?nid=82&id=2095>
8. Armenia DHS 2000. Calverton, Maryland, USA: NSS/Armenia, Ministry of Health/Armenia, and ORC Macro, 344 p.
9. Armenia DHS 2005. Calverton, Maryland, USA: NSS/Armenia, Ministry of Health/Armenia, and ORC Macro, 2006, 634 p.
10. Armenia DHS 2015-16. Rockville, Maryland, USA: NSS/Armenia, Ministry of Health/Armenia, and ICF, 2017.
11. Monitoring of edible salt for iodine content in households, 2009 – 2018: National Centre for Disease Control and Prevention (NCDC), MoH, RA.

12. ՀՀ կառավարություն որոշում, 12.02.2004 թ. N 353-Ն “ՀՀ բնակչության սննդում յոդի անբավարարության հետևանքների դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագիրը, ծրագրով նախատեսված առաջնահերթ (2004-2007 թթ.) միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու և ՀՀ կառավարության 2000 թ. դեկտեմբերի 31-ի N 902 որոշման մեջ լրացում կատարելու մասին”, Երևան, 2004 թ.:
13. Hutchings N., Gerasimov G. Salt iodization in Armenia: A model of sustained success. IDD NEWSLETTER, NOV, 2017, 45 (4), p. 2-3;  
[https://www.ign.org/newsletter/idd\\_nov17\\_armenia\\_alternative.pdf](https://www.ign.org/newsletter/idd_nov17_armenia_alternative.pdf)
14. Better non-communicable disease outcomes: challenges and opportunities for health systems. Armenia Country Assessment (J.Farrington, et al), WHO, 2017, 53 p.  
[http://www.euro.who.int/data/assets/pdf\\_file/0018/336123/HSS-NCDs-Armenia.pdf](http://www.euro.who.int/data/assets/pdf_file/0018/336123/HSS-NCDs-Armenia.pdf)
15. Gov. Protocol Decrees a) **N 3 of 29.01.2010** “On Approval of the Concept Note on Prevention, Early Detection and Treatment of the Most Prevalent NCDs and the Action Plan that Ensures Implementation the Concept”; b) **N 11 of 24.03.2011** “On Approval of National Strategic Programmes and Implementation Timelines for the Three Life-threatening Diseases – CVDs, Malignances and Diabetes Mellitus”; c) **N 50 of 27.11.2014** “On Approval of the Strategy on Promotion of Healthy Lifestyle and the List of Activities” (2014-20); d) **N 4 of 04.02.2016** “On Approval of the Programme on Control of Most Prevalent NCDs, 2016-2020”. See *government website arlis.am in Armenian language.*
16. [https://www.armstat.am/file/article/bnexen\\_12\\_2018.pdf](https://www.armstat.am/file/article/bnexen_12_2018.pdf)
17. <https://www.armstat.am/en/?nid=207>
18. 66<sup>th</sup> World Health Assembly. Follow-up to the Political Declaration of the High-level Meeting of the General Assembly on the Prevention and Control of Non-communicable Diseases. WHA66.10, 27 May 2013
19. Quilez J., Salas-Salvado J. Salt in bread in Europe: potential benefits of reduction. Nutrition Reviews 2012, 70(11):666-78.
20. Al-Jawaldeh A., Al-Khamaiseh M. Assessment of salt concentration in bread commonly consumed in the Eastern Mediterranean Region, EMHJ, 2018, V. 24 , No. 1, 18-24.

**Յոդի միջին օրական սպառումը՝ գնահատման մեջ ընդգրկված աղ պարունակող հիմնական սննդամթերքների աղից**

Սննդ- մթերքը	Օրական սպառված ըստ մարդ- շնչի (գ)	Աղի խտույթ. (% մթերքի քաշից)	Աղի օրական սպա- ռումն ըստ մթերքի (գ)	<b>Գլխ. արդյունք:</b> սննդարդի ողջ աղը եթե յոդացված է		<b>Ընտրովի:</b> եթե այժմ սննդից ստաց-վող յոդացված աղի քանակը հայտնի է			<b>Ընտրովի:</b> աղի կրճատման ծրա- գիր կա կամ պլանավորվում է	
				Յոդի պոտեն- ցիալ սպա- ռումը (մկգ) մթերքի օրա- կան սպա- ռումից* (գ)	Պոտենցիալ %-ը՝ յոդի միջին օրական սպառման մթերքից*	Մթերքում օգտագործ աղի %-ը, որը յոդաց- ված է	Յոդի միջին օրական սպառման %ը օրական մթերքից** (գ)	Յոդի միջին օրական սպառման ընթացիկ %-ը մթերքից**	Յոդի պոտենցիալ սպառումը (մկգ) օրական մթերքից եթե աղի կրճա- տման թիրախը ձեռք է բերվել	Մթերքից ցողի օր. սպառման պոտենցիալ %ը եթե աղի կրճա- տման թիրախը ձեռք է բերվել
SS աղ	4	100	4.0	112	37.8	93.4%	104.61	46.6	73.23	46.6
Հաց	295	1.47	4.3	121	40.9	82.0%	99.57	44.4	69.70	44.4
Պանիր	28	3.92	1.1	31	10.5	7.0%	2.15	0.96	1.51	0.96
Մսամթերք	12.5	2.90	0.4	10	3.4	83.0%	8.42	3.75	5.89	3.75
Թթու	28.3	2.32	0.7	18	6.1	44.0%	8.09	3.60	5.66	3.60
Կիսաֆաբր.	3.7	1.80	0.1	2	0.7	83.0%	1.55	0.69	1.08	0.69
Մակարոն	19.3	0.13	0.0	1	0.3	5.0%	0.04	0.02	0.02	0.01
Տոմ. մածուկ	2.4	1.02	0.0	1	0.3	0.0%	0.00	0.00	0.00	0.00
<b>Ընդհամենը</b>	<b>393.2</b>		<b>10.6</b>	<b>296</b>	<b>100%</b>		<b>224.43</b>	<b>100%</b>	<b>157.1</b>	<b>100%</b>

\*- ենթադրելով, որ օգտագործվող աղը 100%-ով յոդացված է ազգային ստանդարտի միջին մակարդակում, յոդի 30% կորուստով;

\*\* - հինք ընդունելով սննդի արդյունաբերության մեջ օգտագործվող աղի յոդացման %-ը, յոդի 30% կորուստով: